

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
0021 Հայաստան, Երևան, Ադոնցի 10Բ,
Հեռ. 24 50 99; ֆաքս՝ 24 51 99
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ
Սույն բաց ընթացակարգը հայտարարվում է համաձայն
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
ԿԳՄ 2018 թվականի

**Հուլիսի 06-ի նիստի որոշման և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն
Բաց ընթացակարգի ծածկագիրն է՝ «2-Конт-2018-МЭК»**

Պատվիրատուն՝ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ («ՄԷԿ» ՓԲԸ), որի հասցեն է Հայաստանի Հանրապետություն, 0021 ք. Երևան, Ադոնցի 10Բ, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:

Բաց մեկ փուլից կազմված, առանց նախնական ընտրության մրցույթի ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել պայմանագիր գնման առարկա հանդիսացող՝ «ՄԷԿ» ՓԲԸ նյութական ակտիվների ճշգրիտ արժեքների գնահատականի գնահատվող աշխատանքների ծառայությունների մատուցման, ՖՀՄԶ համապատասխան ֆին. հաշվետվության կազմման նպատակների համար, «ՄԷԿ» ՓԲԸ 2018 թվականի կարիքների համար

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անձինք:

Մասնակիցները պետք է բավարարեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված որակավորման չափանիշների պահանջները; ընտրված մասնակցին որոշելու համար կկիրառվի հայտերի բացման և գնահատման մասին «Գնումների մասին» ՀՀ օրենքով և «ՄԷԿ» ՓԲԸ կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին Կանոնադրությամբ սահմանված կարգը:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Մրցության փաթեթը հայերեն /ռուսերեն լեզվով ստանալու համար, անհրաժեշտ է 40 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հայտարարությունը հրապարակելու պահից գրավոր դիմել Պատվիրատուին հետևյալ հասցեով՝ 0021 Հայաստան, Երևան, Ադոնցի 10Բ, մրցության գնումների դեպարտամենտ, սենյակ 201, վճարելով «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ դրամարկղ կամ փոխանցելով հաշվարկային հաշվին «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ – 1570012654440100, ՀՎՀՀ-00078569-10 000 (տաս հազար) ՀՀԴ:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 2018 թ. օգոստոսի 13-ի ժամը 16:00, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ / Հայաստանի Հանրապետություն, 0021, ք.Երևան, փող. Ադոնցի 10 Բ, հեռախոս՝ 24 50 99, ֆաքս՝ 24 51 99, e-mail՝ e.avetisyan@mek.am:

Հայտերը բացվում են Ընկերության ԿԳՄ նիստին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին հաջորդող օրը՝ 2018 թվականի օգոստոսի 14-ին ժամը 11:00-ին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին՝ համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Բարսեղյան , 010 24 50 99(202) հեռախոսահամարով:

Հ Ր Ա Վ Ե Ր

«ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**ԲԱՑ ՄԵԿ ՓՈՒԼԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ՝ ԱՌԱՆՑ ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ՝ "ՄԷԿ" ՓԲԸ
ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՃՇԳՐԻՏ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՎՈՂ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ, ՖՀՄՉ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՖԻՆ.
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ**

*Երեւան
2018*

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ընդհանուր տեղեկություններ մրցույթի վերաբերյալ

1.1. Մրցույթի Կազմակերպիչ հանդիսացող Պատվիրատուն՝ «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ /«ՄԷԿ» ՓԲԸ ՀՀ, 0014, ք. Երեւան, Ադրնցի փող. 10Բ, հեռախոս՝ 24 50 99, ֆաքս՝ 24 51 99, e-mail՝ office@mek.am/՝ մրցույթի անցկացման մասին հրապարակված Ծանուցմամբ (հրապարակվել է 2018 թ. հուլիսի "06-ին" "ՌուսՀիդրո" ԲԲԸ միասնական տեղեկատվական պորտալում, բաժին «Գ-նումներ» www.rushydro.ru, «ՄԷԿ» ՓԲԸ կորպորատիվ ինտերնետային կայքում, բաժին «Գ-նումներ» www.mek.am) և ՀՀ Ֆինանսների Նախարարության պաշտոնական ինտերնետ-կայքում, բաժին «Գ-նումներ» www.minfin.am) հրավիրում է իրավաբանական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներ) մասնակցելու առանց նախնական որակավորման ընտրության բաց միափուլ մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ)՝ "ՄԷԿ" ՓԲԸ նյութական ակտիվների ճշգրիտ արժեքների գնահատականի գնահատվող աշխատանքների ծառայությունների մատուցման, ՖՀՄՉ համապատասխան ֆին. հաշվետվության կազմման նպատակների համար՝ (այսուհետ՝ Ծառայություններ) Պայմանագիր կնքելու իրավունքի նպատակով՝ Պատվիրատուի կարիքների համար:

1.1.2 Տեղեկությունների համար դիմել.

մրցույթի Պատվիրատուին՝ "ՄԷԿ" ՓԲԸ Կենտրոնական Գնումների Մարմնի պատասխանատու քարտուղար պրն. Ա. Բ. Բարսեղյանին. հեռախոս՝ 093 900 220; ֆաքս՝ 24 51 99; էլեկտրոնային հասցեն՝ a.barseghyan@mek.am;

1.1.3. Մրցույթն անց է կացվում «ՄԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 2018 թվականի հուլիսի 06-ի թիվ 120 հրամանի հիման վրա:

1.1.4. Կատարվելիք աշխատանքներին ներկայացվող պահանջները շարադրված են բաժին 2-ում (այստեղ և այսուհետ հղումները վերաբերում են սույն Մրցութային փաստաթղթերին): Պայմանագրի նախագիծը, որը

կկնքվի Մրցույթի արդյունքներով, ներկայացված է բաժին 3-ում: Մրցույթի անցկացման և դրանում մասնակցության կարգը, ինչպես նաև Մրցութային հայտերի նախապատրաստման հրահանգները բերված են 4 և 5 բաժիններում:

1.2. Փաստաթղթերի իրավական կարգավիճակը

1.2.1 1.1.1. կետին համապատասխան հրատարակված (պաշտոնական է համարվում «ՄԷԿ» ՓԲԸ սայթում հրատարակված տարբերակը)՝ Մրցույթի անցկացման մասին Ծանուցումը՝ իր անբաժանելի հավելվածը հանդիսացող սույն Մրցութային փաստաթղթերի հետ միասին հանդիսանում են Պատվիրատուի օֆերտա և մրցույթի Մասնակիցների կողմից պետք է դիտակվի այդպիսին՝ Մրցույթի անցկացման համար սահմանված ժամկետում:

1.2.2. Մրցույթի Մասնակցի մրցութային հայտն ունի օֆերտայի իրավական կարգավիճակ և կդիտարկվի այդպիսին Պատվիրատուի կողմից:

1.2.3. Պատվիրատուի և մրցույթի Հաղթողի կողմից ստորագրված՝ Մրցույթի արդյունքների մասին արձանագրությունն ունի պայմանագրի ուժ, որով սահմանվում է կողմերի պարտականությունը՝ կնքել Պայմանագիր մրցույթի անցկացման մասին Ծանուցմամբ, Մրցութային փաստաթղթերով և մրցույթը Հաղթողի Մրցութային հայտով սահմանված պայմաններով՝ հաշվի առնելով սույն Մրցութային փաստաթղթերի շրջանակներում սահմանված նախապայմանագրային բանակցությունների անցկացման հնարավորությունը:

1.2.4. Մրցույթի արդյունքներով կնքված Պայմանագիրն ամրագրում է կողմերի միջև ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները:

1.2.5. Մրցույթի Հաղթողի հետ կնքվող պայմանագրի պայմանները սահմանելիս օգտագործվում են հետևյալ փաստաթղթերը՝ պահպանելով նշված հիերարխիան (դրանց հակասության դեպքում)

ա) Պատվիրատուի և մրցույթի Հաղթողի միջև նախապայմանագրային բանակցությունների արձանագրությունները (այն պայմանների վերաբերյալ, որոնք ոչ սույն Մրցութային փաստաթղթերում, ոչ մրցույթը Հաղթողի Մրցութային հայտում չեն հիշատակվել)

բ) Մրցույթի արդյունքների մասին արձանագրություն,

գ) Մրցույթի անցկացման մասին Ծանուցում և սույն Մրցութային փաստաթղթերը՝ բոլոր լրացումներով և պարզաբանումներով,

դ) Մրցույթը Հաղթողի մրցութային հայտը՝ բոլոր լրացումներով և պարզաբանումներով,

1.2.6. Պատվիրատուի և Մրցույթի Մասնակիցների այլ փաստաթղթեր տվյալ Մրցույթի կապակցությամբ չեն սահմանում կողմերի իրավունքներն ու պարտականությունները :

1.2.7. Այն ամենում ինչը կարգավորված չէ Մրցույթի անցկացման մասին Ծանուցմամբ և սույն Մրցութային փաստաթղթերով, կողմերը ղեկավարվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով:

1.2.8. Եթե Մրցույթի արդյունքներով կնքվող Պայմանագրի կողմերի նկատմամբ գործում են նաև սահմանված կարգով հրապարակված և գրանցված բոլոր այլ հատուկ նորմատիվ իրավական ակտերը, սույն մրցութային փաստաթղթերը (և Պայմանագրի նախագիծը, որպես դրա մաս) և Հաղթողի մրցութային Հայտը կհամարվեն առաջնային՝ նշված փաստաթղթերի դիսպոզիտիվ նորմերի նկատմամբ:

1.3 Բողոքարկում

1.3.1. Մինչև պայմանագրի կնքումը տարաձայնությունները ուղարկվում են Կենտրոնական Գնման Մարմին: ԿԳՄ պատասխանատու քարտուղարը՝ տարաձայնությունների քննարկման դիմումն ստանալու դեպքում, անհապաղ այդ մասին տեղեկացնում է գնումն անցկացնող հանձնաժողովի նախագահին և Պատվիրատուի Տնօրենների խորհրդին: ԿԳՄ-ում տարաձայնությունների քննարկման ժամանակահատվածում կասեցվում է գնման գործընթացը՝ մինչև որոշման ընդունումը, եթե դրա համար չկան ակնհայտ իրավաբանական կամ տնտեսական բնույթի խոչընդոտներ :

1.3.2. Եթե տարաձայնությունները չեն լուծվում այն ներկայացնող մասնակցի և գնում իրականացնող անձանց փոխադարձ համաձայնությամբ, Պատվիրատուի ԿԳՄ նման տարաձայնություններ ստանալու պահից 10 օրյա ժամկետում կայացնում է գրավոր որոշում, որը պետք է բովանդակվի՝

ա) որոշման ընդունման շարժառիթների հիմնավորումը,

բ) շարադրված պահանջների բավարարմանն ուղղված միջոցները՝ տարաձայնությունների մասնակի կամ ամբողջական լուծման դեպքում

1.3.3. ԿԳՄ իրավասու է ընդունել հետևյալ որոշումներից մեկը կամ մի քանիսը

ա) մրցույթների վերաբերյալ տարածայնությունների դեպքում մրցութային հանձնաժողովի՝ ոչ իրավաչափ գործողություններ կատարած, ապօրինի ընթացակարգեր կիրառած կամ ապօրինի որոշում ընդունած անդամներին պարտավորեցնել իրականացնել գործողություններ, կիրառել ընթացակարգեր կամ ընդունել որոշում՝ սույն Կանոնակարգին համապատասխան,

բ) ավարտված գնումների վերաբերյալ տարածայնությունների դեպքում ղեկավարությանն առաջարկել ընդունել որոշում՝ ապօրինի գործողության, որոշման կամ ապօրինի ընթացակարգի կիրառման արդյունքում մասնակցի կրած վնասները փոխհատուցելու մասին: Եթե պայմանագրում ընդգրկված է վերապահում՝ պայմանագրի կնքման ընթացակարգի խախտումների հայտնաբերման դեպքում պայմանագրի միակողմանի լուծման մասին, ԿԳՄ իրավասու է առաջարկել ղեկավարությանը պայմանագրի կնքումից հետո ընդունել որոշում պայմանագրի միակողմանի լուծման մասին,

գ) մասնակցի դիմումը չհիմնավորված ճանաչել

1.3.4. Մրցույթի անցկացման կապակցությամբ առաջացող բոլոր վեճերն ու տարածայնությունները, այդ թվում՝ Պատվիրատուի և Մասնակիցների կողմից իրենց պարտավորությունների կատարմանը վերաբերող, որոնք չեն կարգավորվել Պատվիրատուի ԿԳՄ-ին բողոքարկման ճանապարհով՝ դատական կարգով՝ նրա իրավական կարգավիճակը և վեճերի լուծման կարգը սահմանող, հայցադիմում ներկայացնելու պահին գործող փաստաթղթերին համապատասխան:

1.3.5. Վերոնշյալը չի սահմանափակում կողմերի իրավունքները դիմելու դատարան՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

1.3.6. Սույն Մրցույթի անցկացման հետ կապված ցանկացած վեճի և տարածայնության քննարկման դեպքում՝ կողմերը հաշվի են առնում, որ ենթակա է կիրարկման Հայաստանի Հանրապետության նյութական և դատավարական իրավունքը:

1.4. Այլ դրույթներ

1.4.1. Մասնակիցը ինքնուրույն է կրում Մրցութային հայտի նախապատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը, իսկ Պատվիրատուն այդ ծախսերի կապակցությամբ պատասխանատու չէ և չունի պարտավորություններ՝ անկախ Մրցույթի ընթացքից և արդյունքներից, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ ուղղակի նախատեսված դեպքերի:

1.4.2. Պատվիրատուն ապահովում է Մրցույթի Մասնակիցներից ստացված բոլոր, այդ թվում՝ Մրցութային հայտերում բովանդակվող տեղեկությունների, խելամիտ գաղտնիությունը: Այդ տեղեկությունների տրամադրումը մրցույթի այլ Մասնակիցներին կամ երրորդ անձանց հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ կամ սույն Մրցութային փաստաթղթերով ուղղակի նախատեսված դեպքերում:

1.4.3. Պատվիրատուն իրավասու է մերժել Մրցութային հայտը, եթե նա բացահայտի, որ մրցույթի Մասնակիցը Պատվիրատուի աշխատակցին ուղղակի կամ անուղղակի տվել է, համաձայնվել է տալ կամ առաջարկել է ցանկացած տեսքով պարգևատրում, այն է՝ աշխատանք, ծառայություն, որևէ արժեքավոր իր որպես խթան, ինչը կարող է ազդեցություն ունենալ մրցույթի Հաղթող ճանաչելու՝ Մրցութային հանձնաժողովի որոշման ընդունման վրա:

1.4.4. Պատվիրատուն իրավասու է մերժել Մրցույթի այն Մասնակիցների Մրցութային հայտերը, որոնք կնքել են որևէ համաձայնություն՝ մրցույթի Հաղթողի ընտրության վրա ազդելու նպատակով:

1.4.5. Մրցույթ անցկացնելու մասին Ծանուցմանը համապատասխան Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել մրցույթ անցկացնելուց ոչ ուշ քան մրցույթի արդյունքների ամփոփումից 5 (հինգ) օր առաջ, չկրելով և ոչ մի պատասխանատվություն մրցույթի Մասնակիցների կամ երրորդ անձանց առջև, որոնց նման գործողությունը կարող է վնաս պատճառել: Պատվիրատուն գրավոր ձևով անհապաղ ծանուցում է Մրցույթի բոլոր Մասնակիցներին մրցույթի անցկացումից հրաժարվելու մասին:

- **2. Ծառայությունների մատուցման տեխնիկական առաջադրանք**

2.1 Ընդհանուր պահանջներ

2.1.1. Անհրաժեշտ թույլտվությունների և փաստաթղթերի ձևակերպմանը ներկայացվող պահանջները բերված են 4-րդ և 5-րդ բաժիններում:

2.2. Ծառայությունների մատուցմանը ներկայացվող պահանջներ

2.2.1. ա) Մատուցվող ծառայությունների ծավալները ներկայացված են սույն Մրցութային փաստաթղթերի Հավելված 1-ում:

բ) Մատուցվող ծառայությունների ժամկետներին ներկայացվող պահանջներ՝ նշում է մրցութային Մասնակիցը:

-

- **3. Պայմանագրի նախագիծ**

3.1. ա) Մատուցվող ծառայությունների Պայմանագրի նախագիծը ներկայացված է սույն Մրցութային փաստաթղթերի Հավելված 2-ում:

- **4. Մրցութային անցկացման կարգը: Մրցութային հայտերի նախապատրաստման հրահանգներ**

4.1. Մրցութային անցկացման ընդհանուր կարգը

4.1.1. Մրցութային անցկացվում է հետևյալ կարգով

ա) Մրցութային անցկացման մասին Ծանուցման հրապարակում (4.2 ենթաբաժին),

բ) Մրցութային փաստաթղթերի տրամադրում կապալառուներին (4.3 ենթաբաժին),

գ) Մրցութային Մասնակիցների կողմից իրենց Մրցութային հայտերի նախապատրաստում, Պատվիրատուի կողմից Մրցութային փաստաթղթերի պարզաբանում, եթե անհրաժեշտ է (4.4 ենթաբաժին),

դ) Մրցութային հայտերի ներկայացում և դրանց ընդունում (4.6. ենթաբաժին)

ե) Մրցութային հայտերով ծրարների բացում (4.7. ենթաբաժին),

զ) Մրցութային հայտերի գնահատում (4.8. ենթաբաժին),

ը) Մրցութային Հաղթողի որոշում (4.9. ենթաբաժին),

թ) Մրցութային արդյունքների մասին Արձանագրության ստորագրում (4.10. ենթաբաժին),

ժ) Պայմանագրի ստորագրում (4.11. ենթաբաժին),

ի) Մրցութային արդյունքների մասին մրցութային Մասնակիցներին ծանուցում (4.12. ենթաբաժին):

4.2. Մրցութային անցկացնելու մասին Ծանուցման հրապարակում

4.2.1. Մրցութային անցկացնելու մասին Ծանուցումը հրապարակվել է 1.2.1. կետում նշված կարգով:

4.2.2. Այլ հրապարակումները չեն հանդիսանում պաշտոնական և Պատվիրատուի համար որևէ հետևանքներ չեն առաջացնում:

4.3. Մրցութային փաստաթղթերի տրամադրում Մասնակիցներին

4.3.1. Մասնակիցները կարող են ստանալ Մրցութային փաստաթղթերը՝ գրավոր դիմելով Պատվիրատուին:

4.3.2. Պատվիրատուն պատասխանատու է մրցույթ անցկացնելու մասին ճանուցման և Մրցութային փաստաթղթերի պայմանների կատարման համար միայն այն Մասնակիցների առջև, ովքեր Մրցութային փաստաթղթերը ստացել են 4.3.1 կետում նշված կարգով:

4.4. Մրցութային հայտերի նախապատրաստում

4.4.1. Մրցութային հայտին ներկայացվող ընդհանուր պահանջներ

4.4.1.1. Մրցույթի մասնակիցը պետք է նախապատրաստի մրցութային հայտը, որը ներառում է.

ա) Օֆերտայի ներկայացման մասին նամակ հավելվածներով՝ սույն Մրցութային փաստաթղթերում բերված ձևերին և հրահանգներին համապատասխան (բաժին 5),

բ) փաստաթղթեր, որոնք հաստատում են մրցույթի Մասնակցի համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթերի պահանջներին (4.5 ենթաբաժին):

4.4.1.2. Մրցույթի Մասնակիցն իրավունք ունի ներկայացնել միայն մեկ Մրցութային հայտ: Այս պահանջի խախտման դեպքում մրցույթի այսպիսի Մասնակցի բոլոր Մրցութային հայտերը մերժվում են առանց ըստ էության քննվելու:

4.4.1.3. Մրցութային հայտում ներառվող յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ստորագրվի այն անձի կողմից, ով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրավունք ունի գործել մրցույթի Մասնակցի անունից առանց լիազորագրի կամ նրա կողմից պատշաճ կերպով լիազորված անձը՝ լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ լիազորված անձ) հավատարմագրի հիման վրա: Վերջինիս դեպքում լիազորագրի բնօրինակը կցվում է Մրցութային հայտին:

4.4.1.4. Մրցութային հայտում ներառվող յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ամրակցվի մրցույթի Մասնակցի կնիքով:

4.4.1.5. 4.4.1.3 և 4.4.1.4 կետերի պահանջները չեն տարածվում փաստաթղթերի՝ նոտարապես վավերացված պատճենների կամ տպագրական եղանակով կազմված փաստաթղթերի վրա:

4.4.1.6. Եթե ներկայացվում են տեղեկատվության լրացուցիչ կրիչները (սկավառակներ, CD-R, CD-RW, գրքույկներ, գրքեր), ապա դրանք, եթե դա հնարավոր է, պետք է լինեն համապատասխան ձևով նշագրված (օրինակ պիտակների օգնությամբ):

4.4.1.7. Դրանից հետո պետք է կատարվի Մրցութային հայտի անխտիր բոլոր էջերի համարակալում:

4.4.1.8. Մրցութային հայտում ներառվող փաստաթղթերը պետք է ամրակցվեն կամ փաթեթավորվեն այնպես, որ բացառվի տեղեկատվական ծրարների և էջերի պատահաբար թափվելը կամ խառնվելը: Եթե Մրցութային հայտը բաղկացած է մի քանի հատորից, խորհուրդ է տրվում, յուրաքանչյուր հատոր կարելի՝ կցելով դրանում ներառված փաստաթղթերի ցանկը: Յուրաքանչյուր այսպիսի հատոր պետք է ունենա էջերի միջանկյալ համարակալում:

4.4.1.9. Մրցույթի Մասնակիցը պետք է նախապատրաստի և Պատվիրատուին տրամադրի Մրցութային հայտի 1 բնօրինակ և 1 պատճեն թղթ կրիչով, ինչպես նաև հայտի 1 էլեկտրոնային կրկնօրինակ (ցանկալի է): Մրցութային հայտի պատճենները նախապատրաստվում են Մրցութային հայտում ներառված յուրաքանչյուր փաստաթղթի բնօրինակի պատճենահանման եղանակով՝ դրանց ստորագրումից և կնիքով վավերացումից, ինչպես նաև էջերի միջանկյալ համարակալումից հետո, բայց կարելուց առաջ:

4.4.1.10. Մրցութային հայտի տեքստում և ոչ մի ուղղում ուժ չունի, բացառությամբ այն դեպքերի, երբ այս ուղղումները հաստատված «ուղղմանը հավատալ» ձեռագիր մակագրությամբ և լիազորված անձի ձեռագիր ստորագրությամբ՝ տեղակայված յուրաքանչյուր ուղղման կողքին:

4.4.2. Մրցութային հայտի գործողության ժամկետին ներկայացվող պահանջներ վերաբերյալ

4.4.2.1. Մրցութային հայտը վավեր է այն ժամկետի սահմաններում, որը նշված է օֆերտայի ներկայացման մասին՝ մրցույթի Մասնակցի նամակում (5.1. ենթաբաժին): Ամեն դեպքում, այդ ժամկետը չպետք է պակաս լինի 30 օրացուցային օրից, հաշված՝ մրցույթին ներկայացված Մրցութային հայտերի ծրարների բացման

ընթացակարգի անցկացման օրվան հաջորդող օրվանից (4.7.1. կետ):

4.4.2.2. Գործողության առավել կարճ ժամկետի նշումը կարող է Մրցութային հայտի մերժման հիմք հանդիսանալ:

4.4.3. Մրցութային հայտի լեզվին ներկայացվող պահանջներ

4.4.3.1. Մրցութային հայտում ներառվող բոլոր փաստաթղթերը պետք է նախապատրաստվեն հայերեն/ռուսերեն լեզվով:

4.4.3.2. Փաստաթղթերը, որոնց բնօրինակները մրցույթի Մասնակցին տրվել են երրորդ անձանց կողմից այլ լեզվով կարող են ներկայացվել բնօրինակի լեզվով, պայմանով, որ դրանց կցված են այդ փաստաթղթերի հայերեն/ռուսերեն թարգմանությունները, (հատուկ վերապահված դեպքերում՝ ապոստիլացված): Փաստաթղթի հայերեն թարգմանության և այլ լեզվով փաստաթղթի բնօրինակի միջև անհամապատասխանության բացահայտման դեպքում Պատվիրատուն որոշումն ընդունելու է թանգմանության հիման վրա:

4.4.4. Մրցութային հայտի արժույթին ներկայացվող պահանջներ

4.4.4.1. Մրցութային հայտում ներառվող փաստաթղթերի դրամական միջոցների բոլոր գումարները պետք է արտահայտվեն հայկական դրամով:

4.4.4.2. Փաստաթղթերը, որոնց բնօրինակները՝ դրամական միջոցների գումարներն այլ արժույթով արտահայտված, տրվել են մրցույթի Մասնակցին երրորդ անձանց կողմից, կարող են ներկայացվել բնօրինակի արժույթով պայմանով, որ այդ փաստաթղթերին կցված կլինեն մեկնաբանություններ՝ տևյալ գումարները ՀՀ դրամին փոխակերպմամբ, ելնելով արժույթի՝ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած պաշտոնական փոխարժեքից՝ նշելով այդպիսի փախարժեքը և դրա սահմանման ամսաթիվը:

4.4.5. Սահմանային գին չի սահմանվում:

4.4.6. Մրցութային փաստաթղթերի պարզաբանում

4.4.6.1. Մրցույթի Մասնակիցներն իրավասու են դիմելու Պատվիրատուին սույն Մրցութային փաստաթղթի պարզաբանման համար: Մրցութային փաստաթղթի պարզաբանման պահանջները պետք է ներկայացվեն գրավոր տեսքով՝ կազմակերպության ղեկավարի կամ մրցույթի Մասնակցի այլ պատասխանատու անձի ստորագրությամբ:

4.4.6.2. Պատվիրատուն պարտավորվում է խելամիտ ժամկետում պատասխանել ցանկացած հարցի, որը նա կստանա Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետի լրանալուց ոչ պակաս, քան 10 օր առաջ (4.6.5. կետ): Ընդ որում, պատասխանի պատճենը (առանց հարցի աղբյուրի մատնանշման) կուղարկվի մրցույթի՝ սույն Մրցութային փաստաթղթերը պաշտոնապես ստացած բոլոր Մասնակիցներին (4.3 ենթաբաժին):

4.4.7. Մրցութային փաստաթղթերում ուղղումներ մտցնելը

4.4.7.1. Պատվիրատուն մինչև Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետի լրանալը (4.6.5. ենթաբաժին) ցանկացած պահի իրավասու է ուղղումներ մտցնել սույն Մրցութային փաստաթղթի մեջ:

4.4.7.2. Սույն Մրցութային փաստաթղթերը պաշտոնապես ստացած մրցույթի բոլոր Մասնակիցները (4.3 ենթաբաժին) անհապաղ ծանուցվում են այսպիսի ուղղումների էության մասին օպերատիվ կապի միջոցների օգտագործմամբ (ֆաքս, էլեկտրոնային փոստ):

4.4.7.3. Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն կարող է երկարաձգել Մրցութային հայտերի ընդունման ժամկետը (4.4.8. կետ):

4.4.8. Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետի երկարաձգումը

4.4.8.1. Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն իրավունք ունի երկարաձգել՝ Մրցութային հայտերի ընդունման՝ 4.6.5. ենթաբաժնում սահմանված վերջնաժամկետը:

4.4.8.2. Սույն Մրցութային փաստաթղթերը պաշտոնապես ստացած՝ մրցույթի բոլոր Մասնակիցները (4.3. ենթաբաժին), անհապաղ գրավոր ծանուցվում են այդ մասին կապի միջոցների օգտագործմամբ (ֆաքս, էլեկտրոնային փոստ):

4.4.8.3. Պատվիրատուն նաև իրավասու է խնդրելու մրցույթի Մասնակիցներին՝ երկարաձգել Մրցութային հայտերի գործողության ժամկետը: Մրցույթի Մասնակիցն իրավասու է համաձայնվել այդպիսի խնդրանքի հետ կամ մերժել այն: Մրցութային հայտերի գործողության ժամկետը երկարաձգելու մասին՝ Պատվիրատուի խնդրանքի մերժումը չունի և ոչ մի բացասական հետևանք և մրցույթի այսպիսի Մասնակցի Մրցութային հայտը գործում է սկզբնապես սահմանված ժամկետի ընթացքում:

4.5. Մրցույթի Մասնակիցներին ներկայացվող պահանջներ: Ներկայացվող պահանջներին համապատասխանության հաստատում:

4.5.1. Մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջներ

4.5.1.1. Մրցույթին կարող է մասնակցել ցանկացած իրավաբանական անձ: Սակայն մրցույթում հաղթելու և Պատվիրատուի հետ Պայմանագիր կնքելու իրավունք ստանալու համար մրցույթի Մասնակիցը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

ա) մրցույթի Մասնակիցը պետք է տիրապետի անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և փորձի, ունենա ռեսուրսային հնարավորություններ (ֆինանսական, նյութատեխնիկական, արտադրական, աշխատանքային), կառավարչական կոմպետենտություն, փորձ և համբավ ու համանման պայմանագրերի կատարման ոչ պակաս քան 3 տարվա փորձ՝ ներգետիկ վոլորտում,

բ) մրցույթի Մասնակիցը պետք է օժտված լինի քաղաքացիական իրավունակությամբ ամբողջ ծավալով՝ Պայմանագրի կնքման և կատարման համար (պետք է գրանցված լինի սահմանված կարգով և ունենա գործունեության տեսակների կատարման համապատասխան գործող արտոնագրեր՝ Պայմանագրի շրջանակներում),

գ) մրցույթի Մասնակիցը չպետք է անվճարունակ կամ սնանկ լինի, գտնվի լուծարման գործընթացում, մրցույթի Մասնակցի գույքի՝ պայմանագրի կատարման համար էական մասի վրա չպետք է կալանք դրված լինի, մրցույթի Մասնակցի տնտեսական գործունեությունը չպետք է կասեցված լինի:

4.5.2. Սահմանված պահանջներին մրցույթի Մասնակցի համապատասխանությունը հաստատող փաստաթղթերին ներկայացվող պահանջները

4.5.2.1. Վերոշարդրյալի հետ կապված՝ մրցույթի Մասնակիցը պետք է Մրցութային հայտի կազմում ընդգրկի վերոնշյալ պահանջներին նրա համապատասխանությունը հաստատող հետևյալ փաստաթղթերը.

- a) գործող խմբագրությամբ կանոնադրության Մասնակցի կողմից վավերացված կրկնօրինակը,
- բ) Պայմանագրի կատարման հետ կապված գործունեության տեսակների գործող արտոնագրերի Մասնակցի կողմից վավերացված կրկնօրինակները,
- գ) իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճեն,
- դ) Մասնակցի կողմից վավերացված հարկային մարմինների տեղեկանք՝ հարկերի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումներ կատարելու մասին,

4.5.2.2. Այն դեպքում, եթե մրցույթի Մասնակիցը գրանցված է Հայաստանի Հանրապետությունից դուրս, նա պարտավոր է ներկայացնել սույն Մրցութային փաստաթղթերի 4.5.2.1 կետով նախատեսված բոլոր փաստաթղթերը: Այն դեպքում, եթե Մասնակցի պետության օրենսդրությանը համապատասխան այս կամ այն փաստաթղթերի տրամադրումն անհնար է, Մասնակիցը պարտավոր է ներկայացնել տեղեկանք՝ այդպիսի պատճառների բացատրությամբ, ինչպես նաև (որքանով դա հնարավոր է) պահանջվողին բովանդակությամբ մոտ համանման փաստաթուղթ:

4.5.2.3. Բոլոր վերընշված փաստաթղթերը կցվում են Մրցութային հայտին՝ մրցույթի Մասնակցի կողմից:

4.5.2.4. Այն դեպքում, եթե որևիցե պատճառով մրցույթի Մասնակիցը չի կարող ներկայացնել պահանջվող փաստաթուղթը, նա պետք է կցի պահանջվող փաստաթղթի բացակայության պատճառը բացատրող, ինչպես նաև սույն պահանջին Մասնակցի համապատասխանության մասին Պատվիրատուին հավաստիացում բովանդակող, կամայական ձևով կազմված տեղեկանք:

4.6. Մրցութային հայտերի ներկայացումն ու դրանց ընդունումը

4.6.1. Ներկայացնելուց առաջ Մրցութային հայտը և դրա պատճենները պետք է ապահով ձևով կնքվեն ծրարներում (փաթեթներում, արկղերում և այլն): Մրցութային հայտը կնքվում է «Մրցութային հայտ» նշված բառերով ծրարում: Մրցութային հայտերը կնքվում են «Բնօրինակ» և «Կրկնօրինակ» նշված բառերով ծրարներում:

4.6.2. Այս ծրարներից յուրաքանչյուրի վրա անհրաժեշտ է նշել հետևյալ տեղեկությունները.

ա) Պատվիրատուի անվանումը և հասցեն 1.1.1. կետին համապատասխան,

բ) մրցույթի Մասնակցի ամբողջական ֆիրմային անվանումը և նրա փոստային հասցեն,

գ) պայմանագրի առարկան՝ 1.1.1. կետին համապատասխան:

4.6.3. Մրցութային հայտով և դրա պատճեններով՝ կնքված ծրարները տեղավորվում են մեկ արտաքին ծրարի մեջ, որը նույնպես պետք է ապահով կերպով կնքվի: Արտաքին ծրարի վրա նշվում է հետևյալ տեղեկատվությունը.

ա) Պատվիրատուի անունը և հասցեն՝ 1.1.1. կետին համապատասխան,

բ) Պայմանագրի առարկան՝ 1.1.1. կետին համապատասխան,

գ) «Չբացել մինչև 2018 թվականի օգոստոսի 14-ը, ժամը 11:00: Բացել միայն ԿԳՄ-ի նիստին» բառերը:

դ) մրցույթի Մասնակցի ամբողջական ֆիրմային անվանումը և նրա փոստային հասցեն:

4.6.4. Մրցույթի մասնակիցները պետք է ապահովեն իրենց մրցութային հայտերի առաքումը Պատվիրատուին՝ կոնտակտային անձ (1.1.2. կետ):

4.6.5. Մրցութային հայտերի վերջնաժամկետն է՝ 2018 թվականի օգոստոսի 13-ին ժամը 16:00: Վերոնշյալ ժամանակից ուշ ստացված մրցութային հայտերը, կմերժվեն Պատվիրատուի կողմից առանց ըստ էության քննվելու՝ անկախ ուշացման պատճառներից:

4.6.6. Պատվիրատուն ծրարն առաքող անձին տալիս է ստացական այն մասին, որ ինքը ստացել է ծրարը՝ նշելով այն ստանալու ժամանակը:

4.7. Մրցույթին ներկայացված ծրարների բացումը

4.7.1. Պատվիրատուն անց է կացնում ընդունված ծրարների բացման հրապարակային ընթացակարգը Ճանուցման մեջ նշված նաացեով և ամսաթվին:

4.7.2. Այս ընթացակարգին կարող են ներկա գտնվել մրցույթի Մասնակիցների ներկայացուցիչները, ովքեր ժամանակին ներկայացրել են իրենց մրցութային հայտերը: Ծրարների բացման ընթացակարգին ներկա գտնվելու իրավունքը հավաստելու համար Մասնակիցների ներկայացուցիչները պետք է ունենան Պատվիրատուի՝ ծրարները ստանալու մասին ստացականների բնօրինակները :

4.7.3. Մրցույթի Մասնակիցների ներկա գտնվող ներկայացուցիչները գրանցվում են, իսկ գրանցման թերթը կցվում է ծրարների բացման արձանագրությանը:

4.7.4. Սույն ընթացակարգի ժամանակ Մրցութային հանձնաժողովը բացում է ստացված յուրաքանչյուր ծրար և հրապարակում է հետևյալ տեղեկությունները՝ հիմնվելով Մրցութային հայտի նյութերի վրա.

ա) մրցույթի Մասնակցի անվանումը և հասցեն,

բ) կատարվող աշխատանքների անվանումը և Մրցութային հայտի ընդհանուր գինը,

գ) այլ տեղեկություններ, որոնք Մրցութային հանձնաժողովը անհրաժեշտ է համարում հրապարակել:

4.7.5. Բացման ընթացակարգի ժամանակ Մրցութային հանձնաժողովը վարում է համապատասխան արձանագրություն, որտեղ արտացոլված է Մրցութային հանձնաժողովի հրապարակած ողջ տեղեկատվությունը:

4.8. Մրցութային հայտերի գնահատումը

4.8.1. Ընդհանուր դրույթներ

4.8.1.1. Մրցութային հայտերի գնահատումն իրականացնում է ԿԳՄ-ը և ԿԳՄ-ի կողմից (անհրաժեշտության դեպքում) ներգրավված անձինք (փորձագետներ ու մասնագետներ):

4.8.1.2. Մրցութային հայտերի գնահատումը ներառում է ընտրական փուլը (4.8.2. կետ) և գնահատման փուլը (4.8.3. կետ):

4.8.2. Ընտրական փուլ

4.8.2.1. Ընտրական փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը ստուգում է.

ա) մրցութային հայտերի ձևակերպման ճշգրտությունը և դրանց համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթերին ըստ էության,

բ) մրցույթի մասնակիցների համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթերի պահանջներին,

գ) ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթի պահանջներին:

4.8.2.2. Ընտրական փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը կարող է մրցույթի Մասնակիցներից պահանջել իրենց մրցութային հայտերի պարզաբանումները և լրացումները, այդ թվում՝ բացակայող փաստաթղթերի տրամադրում: Ընդ որում, Մրցութային հանձնաժողովն իրավասու չէ բացատրություն պահանջել կամ պահանջել պարզաբանումներ կամ փաստաթղթեր, որոնք փոխում են Մրցութային հայտի էությունը:

4.8.2.3. Մրցութային հայտերի ձևակերպման ճշգրտությունը ստուգելիս Մրցութային հանձնաժողովն իրավասու է ուշադրություն չդարձնել մանր թերություններին և վրիպակներին, որոնք չեն ազդում Մրցութային հայտի էության վրա: Մրցութային հանձնաժողովը կարող է ուղղել ակնհայտ թվաբանական և քերականական սխալները:

4.8.2.4. Ընտրական փուլի անցկացման արդյունքներով Մրցութային հանձնաժողովը մերժում է այն մրցութային հայտերը, որոնք.

ա) էապես չեն համապատասխանում սույն Մրցութային փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջներին,

բ) տրված են մրցույթի Մասնակիցների կողմից, ովքեր չեն համապատասխանում սույն Մրցութային փաստաթղթերի պահանջներին,

գ) տրված են մրցութային Մասնակիցների կողմից, ովքեր չեն տրամադրել սույն փաստաթղթերով պահանջվող փաստաթղթերը, կամ ներկայացված փաստաթղթերում առկա են Մասնակցի կամ նրա կողմից առաջարկվող արտադրանքի մասին ոչ հավաստի տեղեկություններ,

դ) ներառում են սույն Մրցութային փաստաթղթերով սահմանված պայմաններին չհամապատասխանող առաջարկներ,

ե) տրված են մրցույթի Մասնակիցների կողմից, ովքեր չեն համաձայնվել Մրցութային հանձնաժողովի առաջարկի հետ՝ ուղղելու իրենց մրցութային հայտերի ակնհայտ թվաբանական կամ քերականական սխալները:

4.8.3. Գնահատման փուլ

4.8.3.1. Գնահատման փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը համադրում և գնահատում է Մրցութային հայտերը՝ ըստ Մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման չափանիշների՝ ելնելով հետևյալ չափանիշներից.

ա) աշխատանքների արժեքը և դրանց վճարման պայմանները,

բ) Մասնակցի որակավորումը (նմանատիպ պայմանագրերի քանակ),

գ) Մասնակցի հուսալիությունը (փորձ, ռեսուրսային հնարավորություններ և այլն):

4.9. Մրցույթի հաղթողին որոշելը

4.9.1. Նիստի ժամանակ Մրցութային հանձնաժողովը որոշում է մրցույթի Հաղթողին, որպես Մրցույթի մասնակցի, որի Մրցութային հայտը գրավել է առաջին տեղը ըստ Մրցութային հայտերի՝ Պատվիրատուի համար նախընտրելիության աստիճանի՝ ըստ հաստատված գնահատման չափանիշների:

4.9.2. ԿԳՄ՝ մրցույթի Հաղթողի մասին որոշումը ձևակերպվում է ԿԳՄ նիստի արձանագրությամբ:

4.9.3. Մրցույթի Մասնակիցը անհապաղ տեղեկացվում է մրցույթի Հաղթող ճանաչվելու մասին, ինչպես նաև մրցույթի արդյունքների մասին արձանագրության ստորագրման տեղի և կարգի մասին: (Ենթաբաժին 4.10):

4.10. Մրցույթի արդյունքների մասին Արձանագրության ստորագրում:

4.10.1. Մրցույթի արդյունքների մասին Արձանագրության ստորագրումը նշանակվում է (կանխավ) մրցույթի արդյունքների ամփոփման ամսաթվից 10 (տաս) օրվա ընթացքում՝ Պատվիրատուի հասցեով: Հատուկ դեպքերում մրցութային հանձնաժողովը կատող է երկարացնել տվյալ ժամկետը:

4.10.2. Մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրվում է երկու օրինակով, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

4.10.3. Մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը յուրաքանչյուր կողմի հետ ստորագրվում է այն անձի կողմից, որը իրավունք ունի գործել մրցույթի Մասնակցի անունից առանց լիազորագրի՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, կամ պատշաճ կերպով լիազորված անձի կողմից՝ լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ լիազորված անձի), ինչպես նաև ամրակցվում է կողմերի կնիքներով: Ընդ որում յուրաքանչյուր կողմ իրավասու է պահանջել մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը ստորագրած անձի իրավասության հաստատումը:

4.10.4. Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը, եթե մրցույթի Հաղթողը՝

ա) չի ստորագրի Պայմանագիրը՝ մրցույթի արդյունքների մասին Արձանագրությամբ սահմանված ժամկետում,

բ) կիրառարվի Պայմանագրի ստորագրումից՝ 1.2.5 կետերում սահմանված պայմաններով,

գ) չի կատարի սույն Մրցութային փաստաթղթերով նախատեսված այլ պայմաններ:

4.11. Պայմանագրի ստորագրում

4.11.1. Պայմանագիրը Պատվիրատուի և մրցույթի Հաղթողի միջև ստորագրվում է մրցույթի արդյունքների մասին Արձանագրության հիման վրա (Ենթաբաժին 4.10) 3 (երեք) ամսվա ընթացքում:

4.11.2. Այն դեպքում, եթե ՀՀ գործող օրենսդրությամբ և Պատվիրատուի հիմնադիր փաստաթղթերով Պատվիրատուի կառավարման կոմպետենտ մարմինների կողմից (Բաժնետերերի ընդհանուր ժողովի, Տնօրենների խորհրդի և այլն), պահանջվում է Հաղթողի առաջարկած պայմանագրի պայմանների համապատասխան նախնական համաձայնեցում (հավանություն, հաստատում), Հաղթողի հետ պայմանագիրը կնքվում է միայն

այդպիսի համաձայնեցումից (հավանություն, հաստատում) հետո, իսկ 4.11.1 կետում նշված ժամկետը հաշվվում է այդպիսի համաձայնություն (հավանություն, հաստատում) ստանալուց հետո:

4.11.3. Բոլոր այն հարցերի շուրջ, որոնք չեն արտացոլվել մրցույթի անցկացման մասին Ծանուցման, սույն Մրցութային փաստաթղթերի և մրցույթի Հաղթողի Մրցութային հայտի մեջ, կողմերը իրավունք ունեն բանակցություններ վարել: Բանակցությունների ընթացքը և ձեռք բերված արդյունքները ամրագրվում են մինչև պայմանագրային բանակցությունների Արձանագրությունում:

4.11.4. Պայմանագրի պայմանները որոշվում են 1.2.5. կետին համապատասխան:

4.12. Մրցույթի Մասնակիցների տեղեկացումը մրցույթի արդյունքների մասին

4.12.1. Մրցույթի արդյունքների մասին արձանագրության ստորագրումից հետո Պատվիրատուն մրցույթի բոլոր Մասնակիցներին իրենց գրավոր հարցումին ծանուցում կուղարկի մրցույթի արդյունքների մասին:

4.12.2. Պատվիրատուն կիրառարակի մրցույթի արդյունքների մասին տեղեկությունները կամ այն մասին, որ մրցույթը տեղի չի ունեցել «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ www.mek.am կորպորատիվ ինտերնետային սայթում, բաժին «Գ-նումներ»:

4.12.3. Եթե արձանագրության ստորագրումից մինչև պայմանագրի ստորագրումը հաղթողը փոխվում է (օրինակ՝ հրաժարման արդյունքում) Մասնակիցները նույն կարգով են տեղեկացվում նոր հաղթողի մասին:

5. Մրցույթի մասնակցի պարտավորությունների կատարման ապահովումը տուժանքի ձևով

5.1.1. Մրցութային հայտերի ներկայացման հետ կապված մրցույթի Մասնակիցների պարտավորությունները ապահովվում են տուժանքով [նշվում է ապահովման գումարը (Պայմանագրի ենթադրվող արժեքի 3% ոչ ավել) կամ ապահովման գումարի հաշվարկման կարգը, օրինակ՝ «Պայմանագրի՝ Մասնակցի առաջարկած գնի 2% (հաշվի առնելով հարկերը):] դրամի չափով:

5.1.2. Տուժանքներով ապահովում են մրցույթի Մասնակցի հետևյալ պարտավորությունները՝

ա) Մրցութային հայտը իր գործողության ժամկետում չփոխելու և հետ չկանչելու պարտականություն՝ Մրցութային հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո (կետ 4.6.5).

բ) պարտականությունը՝ ակնհայտ կեղծ տեղեկություններ չներկայացնելու կամ դիտավորյալ չխեղաթյուրելու տեղեկատվությունը կամ փաստաթղթերը, որոնք ներկայացված են Մրցութային հայտի կազմում,

գ) 4.10. ենթաբաժնում նախատեսված կարգով մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը ստորագրելու՝ մրցույթի Մասնակցի մրցույթի Հաղթող ճանաչելու դեպքում և նրան այդ մասին պատշաճ ծանուցելու պարտականությունը.

դ) սույն Մրցութային փաստաթղթերով սահմանված կարգով Պայմանագիր կնքելու պարտականություն (ենթաբաժին 4.11):

5.1.3. Վերոհիշյալ պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում մրցույթի Մասնակիցը պարտավոր է տուժանքի վճարման մասին մրցույթի Կազմակերպչի կողմից պահանջների ներկայացումից հետո տասը օրվա ընթացքում փոխանցել տուժանքի գումարը այդ պահանջում ներկայացված վավերապայմաններով:

5.1.4. Սույն բաժնի և առաջարկի հայտի կազմում ներկայացված տեքստերը միասին ունեն տուժանքի գրավոր համաձայնագրի ուժ:

5.1.5. Մրցույթի Կազմակերպչի իրեն իրավունք է վերապահում իր հայեցողությամբ պահանջել տուժանքի գումարի ընդհամենը մեկ մասը:

5.1.6. Մրցութային հայտի տեքստում մրցույթի Մասնակցի՝ տուժանքի վճարման պարտավորության բացակայությունը Մրցութային փաստաթղթերին համապատասխան կամ հայտում տուժանքի մասին

պարտականությունների արտացոլումը, որը վերոշարադրյալ պահանջներին չի համապատասխանում, կարող է հիմք հանդիսանալ մրցույթի Մասնակցի Մրցութային հայտի մերժման համար:

- **6. Մրցութային հայտում ներառվող փաստաթղթերի հիմնական ձևերի նմուշները**

6.1. Օֆերտայի ներկայացման մասին նամակ (ձև 1)

6.1.1. Օֆերտայի ներկայացման մասին նամակի ձևը

ձևի սկիզբ

«----» -----**թվականի**

№-----

Հարգելի պարոնայք

Ուսումնասիրելով մրցույթի անցկացման Ծանուցումը՝ հրատարակված[նշվում է մրցույթի անցկացման մասին Ծանուցագրի հրապարակման ամսաթիվը և հրատարակությունը, որում այն հրատարակվել է], և Մրցութային փաստաթղթերը, և ընդունելով դրանցում սահմանված մրցույթի պայմանները և պահանջները,

(Մասնակցի ամբողջական անվանումը՝ նշելով կազմակերպչի անվանումը)

գրանցված

հետևյալ

հասցեով

(մրցույթի Մասնակցի իրավաբանական հասցեն)

առաջարկում է հետևյալ աշխատանքների կատարման Պայմանագիր կնքել՝

(Պայմանագրի առարկայի կրճատ նկարագրություն)

ընդհանուր գումարով

Մրցութային հայտի վերջնական արժեքը, առանց ԱԱՀ, դրամ

(վերջնական արժեքը, դրամ, առանց ԱԱՀ)

բացի դրանից ԱԱՀ, դրամ

ընդամենը ԱԱՀ-ով, դրամ

(ընդհանուր արժեքը, դրամ, ԱԱՀ-ով)

Սույն Մրցութային հայտը ունի օֆերտայի իրավական կարգավիճակ և գործում է մինչև _____ “ ____ “
թվականը (ոչ պակաս քան 40 օր սկսած Մրցութային հայտերի ծրարների բացման օրվանից):

Սույն Մրցութային հայտը լրացվում է հետևյալ փաստաթղթերով՝ ներառյալ անբաժանելի հավելվածները՝

Կոմերցիոն առաջարկ (համաձայն մրցութային փաթեթի թիվ 2 հավելվածի) ___ թ.

Պայմանագրի նախագծի տարաձայնությունների Արձանագրությունը (ձև 2) - ___ թ.

Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկը (ձև 3) - ___ թ.

Համանման պայմանագրերի կատարման ծավալների և ցանկի մասին տեղեկանք (ձև 4) - _____թ.

Մրցույթի Մասնակցի համապատասխանությունը սահմանված պահանջներին հաստատող փաստաթղթեր (բաժին 4.5.) _____ - _____թ.

(Կ.Տ. ստորագրություն)

(ստորագրողի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

6.1.2. Լրացման հրահանգներ

6.1.2.1. Նամակը հարկավոր է ձևակերպել մրցույթի Մասնակցի պաշտոնական բլանկի վրա: Մրցույթի Մասնակցից տալիս է համար և ամսաթիվ՝ իր մոտ ընդունված փաստաթղթաշրջանառության կանոններին համապատասխան:

6.1.2.2. Մրցույթի Մասնակցից պետք է նշի իր լրիվ անվանումը (կազմակերպչաիրավական ձևի նշումով) և իրավաբանական հասցեն:

6.1.2.3. Մրցույթի Մասնակցից պետք է աշխանքների կատարման արժեքը նշի թվերով և բառերով, դրամով առանց ԱԱՀ, ԱԱՀ-ի մեծությունը և ԱԱՀ-ի հետ միասին՝ աշխատանքների գնի Կոմերցիոն առաջարկին համապատասխան (սյունակ «ԸՆԴՀԱՆՈՒՐ»): Գինը հարկավոր է նշել XXX XXX XXX,XX դրամ ձևաչափով, օրինակ՝ «1 234 567,89 դրամ (Մեկ միլիոն երկու հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր վաթսուներթ դրամ ութսունինը լումա)»:

6.1.2.4. Մրցույթի Մասնակցից պարտավոր է նշել մրցույթին մասնակցելու Հայտի գործողության ժամկետը՝ 4.4.2.1 ենթակետին համաձայն:

6.1.2.5. Մրցույթի մասնակցից պետք է թվարկի և նշի օֆերտայի ներկայացման մասին նամակին կցվող՝ մրցույթի Մասնակցի տեխնիկաառևտրային առաջարկի էությունը որոշող փաստաթղթերից յուրաքանչյուրի ծավալը:

6.1.2.6. Նամակը պետք է ստորագրվի և ամրակցի կնիքով 4.4.1.3 և 4.4.1.4 ենթակետերի պահանջներին համապատասխան:

6.2. Պայմանագրի նախագծի տարածայնությունների Արձանագրություն (ձև 2)

6.2.1. Պայմանագրի նախագծի տարածայնությունների Արձանագրության ձև

ձևի սկիզբ

«---» -----թվականի

թիվ -----

Պայմանագրի նախագծի տարածայնությունների Արձանագրություն

Մրցույթի մասնակցի հասցեն և անվանումը՝ _____

Պայմանագրի «Պարտադիր» պայմանները

№	Պայմանագրի նախագծի կետի № (բաժին 3)	Ելակետային ձևակերպումներ	Մրցույթի Մասնակցի առաջարկները	Ծանոթագրություններ, հիմնավորումներ
1.				
2.				
3.				

Պայմանագրի «Ցանկալի» պայմաններ

№	Պայմանագրի նախագծի № կետը (բաժին 3)	Ելակետային ձևակերպումներ	Մրցույթի Մասնակցի առաջարկները	Ծանոթագրություններ,, հիմնավորումներ
1.				
2.				
3.				

(Կ.Տ. ստորագրություն)

(ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

Ճ և ի ա վ ա ր տ

6.2.2. Պայմանագրի նախագծի տարածայնությունների Արձանագրության լրացման հրահանգներ

6.2.2.1. Մրցույթի Մասնակիցը բերում է օֆերտայի ներկայացման մասին նամակի համարը և ամսաթիվը:

6.2.2.2. Մրցույթի Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում կազմակերպաիրավական ձևը) և հասցեն:

6.2.2.3. Եթե մրցույթի Մասնակիցը իր Մրցութային հայտի հետ միասին չի ներկայացնում տվյալ ձևը, դա նշանակում է, որ իր կողմից լիովին ընդունվում է ներկայացված Պայմանագրի նախագիծը (բաժին 3):

6.2.2.4. Այն դեպքում, եթե մրցույթի Մասնակիցը ունի Պայմանագրի նախագծում փոփոխություններ մտցնելու առաջարկներ, մրցույթի Մասնակիցը պետք է իր մրցութային հայտի կազմի մեջ ներկայացնի տարածայնությունների տվյալ արձանագրությունը: Տարածայնությունների պատրաստված արձանագրությունում մրցույթի Մասնակիցը պետք է հստակ տարանջատի Պայմանագրի՝ իր համար պարտադիր և ցանկալի պայմանները: Այստեղ «Պարտադիր» են համարվում այն առաջարկները և պայմանները, որոնք չընդունելու դեպքում նա կիրառարվի Պայմանագիրը ստորագրելուց: «Ցանկալի» են այստեղ համարվում Պայմանագրի պայմանների այն առաջարկները, որոնք նա առաջարկում է Պատվիրատուի քննարկմանը, որոնց մերժումը Պատվիրատուի կողմից, սակայն, չի հանգեցնի մրցույթի Մասնակցի՝ մրցույթի Հաղթող ճանաչվելու դեպքում Պայմանագրի ստորագրումից հրաժարման:

6.2.2.5. Պայմանագրի պայմանները որոշվելու են 1.2.5 կետին համապատասխան:

6.2.2.6. Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում մինչ Պայմանագրի ստորագրումը քննարկել և ընդունել Պայմանագրի առաջարկները և լրացուցիչ (սկզբունքային բնույթ չկրող) փոփոխությունները: Այն դեպքում, եթե կողմերը համաձայնության չգան այդ փոփոխությունների վերաբերյալ, ապա կողմերը պարտավորված կլինեն Պայմանագիրը ստորագրել այն պայմաններով, որոնք շարադրված են սույն Մրցութային փաստաթղթերում և մրցույթի Հաղթողի մրցութային հայտում:

6.2.2.7. Ցանկացած դեպքում Մրցույթի Մասնակիցը պետք է ի նկատի ունենա, որ՝

ա) եթե Պայմանագրային այն պարտադիր առաջարկներից և պայմաններից որևէ մեկը, որը առաջ է քաշվել Մասնակցի կողմից, Պատվիրատուի համար անընդունելի կլինի, այդ մրցութային հայտը կմերժվի անկախ տեխնիկատնտեսական առաջարկների բովանդակությունից:

բ) ամեն դեպքում մրցույթի Մասնակցի կողմից Պատվիրատուի պատրաստած պայմանագրի սկզբնական նախագծի տարածայնությունների արձանագրությունը ներկայացնելը չի գրկում մրցույթի Մասնակցին և Պատվիրատուին այդ պայմանները քննարկելու և դրանք փոփոխելու իր իրավունքից՝ նախապայմանագրային բանակցությունների ընթացքում՝ այդ պայմանները փոփոխելու համաձայնություն ձեռք բերելու համար::

6.3. Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկը (ձև 3)

6.3.1. Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկի ձևը

ձևի սկիզբ

«----» -----թվականի

թիվ -----

Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկ

Մրցույթի Մասնակցի հասցեն և անվանումը՝ _____

№ п/п	Անվանումը Наименование	Տեղեկություններ մրցույթի Մասնակցի մասին (լրացվում է մրցույթի Մասնակցի կողմից)
1.	Մրցույթի Մասնակցի կազմակերպատիրավական ձևը և ֆիրմային անվանումը Организационно-правовая форма и фирменное наименование Участника конкурса	
2.	Հիմնադիրները (թվարկել բոլոր այն հիմնադիրների անվանումները և կազմակերպատիրավական ձևերը կամ Ա.Ա.Հ., ում բաժինը կանոնադրական կապիտալում գերազանցում է 10%) Учредители (перечислить наименования и организационно-правовую форму или Ф.И.О. всех учредителей, чья доля в уставном капитале превышает 10%)	
3.	Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման վկայական (ամսաթիվը և համարը, ում կողմից է տրված) Свидетельство регистрации в государственном регистре юридических лиц (дата и номер, кем выдано)	
4.	Մրցույթի մասնակցի ՀՎՀՀ ИНН Участника конкурса	
5.	Իրավաբանական հասցեն Юридический адрес	
6.	Փոստային հասցեն Почтовый адрес	
7.	Մասնաճյուղեր՝ թվարկել անվանումները և փոստային հասցեները Филиалы: перечислить наименования и почтовые адреса	

8. Բանկային վավերապայմաններ (բանկի անվանումը և հասցեն, մրցույթի Մասնակցի հաշվարկային հաշվի համարը բանկում, բանկի հեռախոսները, այլ բանկային վավերապայմաններ)
Банковские реквизиты (наименование и адрес банка, номер расчетного счета Участника конкурса в банке, телефоны банка, прочие банковские реквизиты)
9. Մրցույթի Մասնակցի հեռախոսները (նշելով քաղաքի կոդը)
Телефоны Участника конкурса (с указанием кода города)
10. Մրցույթի Մասնակցի ֆաքսը (նշելով քաղաքի կոդը)
Факс Участника конкурса (с указанием кода города)
11. Մրցույթի Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն
Адрес электронной почты Участника конкурса
12. Մրցույթի մասնակցի ղեկավարի ազգանունը, անունը և հայրանունը, ով ստորագրելու իրավունք ունի՝ համաձայն մրցույթի Մասնակցի հիմնադիր փաստաթղթերի՝ նշելով պաշտոնը և կոնտակտային հեռախոսը
Фамилия, Имя и Отчество руководителя Участника конкурса, имеющего право подписи согласно учредительным документам Участника конкурса, с указанием должности и контактного телефона
13. Մրցույթի Մասնակցի պատասխանատու անձի ազգանունը, անունը և հայրանունը՝ նշելով պաշտոնը և կոնտակտային հեռախոսը
Фамилия, Имя и Отчество ответственного лица Участника конкурса с указанием должности и контактного телефона

(Կ.Տ. ստորագրություն)

(ստորագրողի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

6.3.2 Լրացման հրահանգներ

6.3.2.1. Մրցույթի Մասնակիցը նշում է մրցութային հայտի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներկայացման մասին նամակին համապատասխան (ենթաբաժին 5.1.):

6.3.2.2. Մրցույթի Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում կազմակերպաիրավական ձևը) և իր հասցեն:

6.3.2.3. Մրցույթի մասնակիցները պետք է վերոհիշյալ աղյուսակը լրացնեն բոլոր կետերով: Որևէ տվյալի բացակայության դեպքում նշել «չկա» բառը:

6.3.2.4. «Բանկային վավերապայմաններ» 8 սյունյակում նշվում են այն վավերապայմանները, որոնք կօգտագործվեն Պայմանագրի կնքման դեպքում:

6.4. Համանման պայմանագրերի կատարման ծավալների և ցանկի մասին տեղեկանք (ձև 4)

6.4.1. Համանման պայմանագրերի կատարման տարեկան ծավալների և ցանկի մասին տեղեկանքի ձև

ձևի սկիզբ

«----» -----թվականի

թիվ -----

Համանման պայմանագրերի կատարման ծավալների և ցանկի մասին տեղեկանք

Մրցույթի Մասնակցի հասցեն և անվանումը՝ _____

№	Կատարման ժամկետները (կատարման սկզբի տարին և ամիսը – կատարման փաստացի կամ նախատեսվող ավարտի տարին և ամիսը, չավարտված պայմանագրերի համար՝ կատարման տոկոսը)	Պատվիրատուն (անվանումը, հասցեն, կոնտակտային անձ՝ պաշտոնի նշումով, կոնտակտային հեռախոսներ)	Պայմանագրի նկարագրումը (մատակարարումների կազմը և ծավալը, պայմանագրի հիմնական պայմանների նկարագրումը)	Պայմանագրի գումարը, դրամ,	Տեղեկություններ քվարկված պայմանագրերի պահանջների մասին
1.					
2.					
3.					
Ընդամենը ամբողջ 2015 տարվա համար					X
1.					
2.					
3.					
Ընդամենը ամբողջ 2016 տարվա համար					X
1.					
2.					
3.					
Ընդամենը ամբողջ 2017 տարվա համար					x

(Կ.Տ. ստորագրություն)

(ստորագրողի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

6.5.2. Լրացման հրահանգներ

6.5.2.1. Մրցույթի Մասնակիցը նշում է մրցութային հայտի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներկայացման մասին նամակին համապատասխան (ենթաբաժին 5.1.):

6.5.2.2. Մրցույթի Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում կազմակերպարավական ձևը) և իր հասցեն:

6.5.2.3. Այս ձևում մրցույթի Մասնակիցը նշում է ծավալներով, կատարման ժամկետներով և 2 և 3 բաժինների այլ պահանջներով համադրելի համանման պայմանագրերի կատարման տարեկան ծավալները և ցանկը:

6.5.2.4. Մրցույթի Մասնակիցը կարող է ինքնուրույն ընտրել այն պայմանագրերը, որոնք, իր կարծիքով, լավագույն կերպով բնութագրում են իր փորձը:

6.5.2.5. Մրցույթի մասնակիցը կարող է ներառել նաև չավարտված պայմանագրեր՝ տվյալ փաստը անպայմանորեն նշելով:

Պատվիրատուի ոչ ընթացիկ ակտիվների գնահատման կատարման տեխնիկական առաջադրանք

1. Պատվիրատու

Պատվիրատու է հանդիսանում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ *Պատվիրատու*)

2. Կատարող

Գնահատող կազմակերպություններին ներկայացվող՝ Մրցութային փաստաթղթերի _____ կետում նշված պահանջները բավարարող կազմակերպություն, որը միաժամանակ հանդիսանում է Մրցույթի Հաղթող (այսուհետ՝ «*Կատարող*»)

3. Գնահատման նպատակ

Գնահատումը իրականացվում է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ *ՖՀՄՄ*) համաձայն կառավարչական որոշումներ կայացնելու/ֆինանսական հաշվետվություն իրականացնելու նպատակով

4. Գնահատման օբյեկտ

Գնահատման օբյեկտ է հանդիսանում Պատվիրատուի գույքային համալիրը (հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները) (այսուհետ՝ «*Գնահատման օբյեկտ*»)

5. Գնահատման ամսաթիվ

Գնահատման օբյեկտի գնահատումը իրականացվում է 31.10.2018 թ. դրությամբ

6. Գնահատման արժույթ

Գնահատումը իրականացվում է ՀՀ դրամով, իսկ վերջնական արդյունքները ներկայացվում են նաև ԱՄՆ դոլարով՝ գնահատման ամսաթվի դրությամբ

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Կենտրոնական բանկի սահմանած պաշտոնական փոխարժեքով

7. Գնահատման ստանդարտներ

Գնահատման միջազգային ստանդարտներ (այսուհետ՝ **ԳՄՄ**)

8. Արտաքին աուդիտոր

Պատվիրատուի արտաքին աուդիտոր է հանդիսանում կազմակերպությունը, որի կողմից իրականացվում են Պատվիրատուի՝ ՖՀՄՍ համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվության ծառայությունները (այսուհետ՝ **Աուդիտոր**):

9. Ծառայությունների բովանդակություն (Խնդրի առաջադրում)

- Կատարողը պետք է ՀՀ օրենսդրության շրջանակներում իրականացնի Գնահատման օբյեկտի շուկայական/արդար և վերականգնման արժեքի (գնի) որոշման ծառայությունները (այսուհետ՝ «Ծառայություններ»),
- Կատարողը ստանձնում է Տեխնիկական առաջադրանքի 9-րդ կետի համաձայն մատուցված Ծառայության արդյունքների՝ Պատվիրատուի և Պատվիրատուի Աուդիտորի հետ համաձայնեցման պարտավորությունները:

10. Ծառայությունների ծավալը

- Տեխնիկական առաջադրանքի 3-րդ կետում նշված Գնահատման օբյեկտների շուկայական/արդար և վերականգնման արժեքի (գնի) գնահատում Գնահատման օբյեկտ կտվածքով (առանց գույքագրման անցկացման),
- Տնտեսության գնահատվող ակտիվների ցանկերում ներառված Գնահատման յուրաքանչյուր օբյեկտի արժեքի (գնի) բաժանում,
- Ֆիզիկական և ֆունկցիոնալ վիճակի հիման վրա ակտիվների օգտակար ծառայության մնացորդային ժամկետի գնահատում,
- Ֆինանսական հաշվետվության հուսալիությունը բարձրացնելու և հաշվապահական հաշվառումը բարելավելու (օպտիմալացնելու) նպատակով ֆինանսական հաշվառման ամորտիզացիայի և մաշման հաշվարկման համար դրույքաչափերի վերանայում,
- Կատարողը իրականացնում է Գնահատման օբյեկտի նույնականացումը ԳՄՄ –ի համապատասխան՝ Գնահատման օբյեկտի գնման արդյունքների հիման վրա՝ Պատվիրատուի մասնագետների ուղեկցությամբ,
- Ոչ ընթացիկ ակտիվների մաշման և ամորտիզացիայի հաշվարկման դրույքների վերանայման հարկային հաշվառմանը վերաբերող հանձնարարականներ:

11. Գնահատման մեթոդներ

Գնահատման օբյեկտների շուկայական / արդար արժեքը հնարավորության դեպքում (որպես դրամական հոսքեր առաջացնող առանձին միավոր) պետք է որոշվի ապագա տնտեսական շահերից ելնելով՝ հաշվի առնելով ձևավորված շուկայական իրավիճակն ու ռիսկերը:

Գնահատման օբյեկտների շուկայական արժեքի (գնի) գնահատման շրջանակներում անհրաժեշտ է դիտարկել **երեք մոտեցումների** կիրառումը՝ **Եկամտային (DCF մեթոդ), շուկայական (համեմատական), ծախսային**, կամ հիմնավորել այդ մոտեցումների կիրառումից հրաժարվելը:

Եկամտային մոտեցման (DCF մեթոդ) շրջանակներում պետք է վերլուծության ենթարկվի հետևյալ տեղեկատվությունը.

- Գնահատման օբյեկտների տեղադրությունը և ֆիզիկական վիճակը, Գնահատման օբյեկտի տեղադրման շրջանում մրցակցային միջավայրը, շուկայի զարգացման ընթացիկ վիճակը և հեռանկարները,
- Փաստացի գործառնական և ֆինանսական ցուցանիշները ըստ Գնահատման օբյեկտների (ելնելով նախորդ պատմական շրջաններում Կատարողի պահանջով սեփականատիրոջ կողմից ներկայացված տեղեկատվությունից)՝ վաճառքի պատմական ծավալներ և մարզինալություն, ծառայությունների համար ծախսեր, գործունեության իրականացման համար գործառնական ծախսեր, ներառյալ վերանորոգում, կառավարչական ծախսեր, շրջանառելիության ցուցանիշներ և այլն,
- հենանիշների հետ պատմական տվյալների համեմատություն՝ ըստ նմանօրինակների: Էական շեղումների դեպքում Կատարողը Գնահատման օբյեկտի ցուցանիշների կանխատեսման նպատակով իրականացնում է անհրաժեշտ շտկում կամ նշում է բացահայտված շեղումը և արդյունքների զգայունությունը դրա փոփոխության նկատմամբ:

Գործառնական եկամուտներին/ծախսերին վերաբերող որևէ տվյալների բացակայության դեպքում Կատարողը պետք է կիրառի գնահատման համանման օբյեկտների ցուցանիշները՝ ելնելով գնահատման իր կուտակած փորձից:

Շուկայական (համեմատական) մոտեցման շրջանակներում պետք է վերլուծվեն նաև ՀՀ-ում/տարածաշրջանում վերջին մի քանի տարվա ընթացքում կնքված գործարքների արժեքային մուլտիպլիկատորները:

Ծախսային մոտեցման շրջանակներում պետք է հաշվի առնվեն ակտիվները ֆունկցիոնալ վիճակին բերելու հետ կապված բոլոր լրացուցիչ ծախսերը, յուրաքանչյուր ակտիվի օգտակար ծառայության նորմատիվ և մնացորդային ժամկետները, ակտիվների ֆիզիկական և ֆունկցիոնալ վիճակը և այլն:

12. Գնահատման անցկացման պահանջ 1. Կատարողին ներկայացվող պահանջներ

- Կատարողը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության տարածքում գնահատման աշխատանքների կատարման համապատասխան որակավորում (լիցենզիա, թույլտվություն և այլն),
- Կատարողի միջազգային ճանաչվածությունը կհամարվի առավելություն,
- Կատարողը չպետք է կախված լինի գնահատման կատարման արդյունքներից,
- Պատվիրատուի, նրա հետ փոխկապակցված անձանց, ՀՀ կառավարության (պետական մարմինների) հետ շահերի բախման բացակայությունը: Ներկայացվում է Կատարողի հաստատող նամակը,
- Գրավոր պարտավորություն այն մասին, որ ծառայությունների մատուցմանը ներգրավվելու է Տեխնիկական առաջադրանքի մեջ նշված Կատարողի աշխատակիցների կազմը, որը ժամանակին կներկայացվի Պատվիրատուին: Ծառայությունների մատուցման ընթացքում աշխատակիցների կազմի հնարավոր փոփոխության դեպքում Պատվիրատուին ժամանակին կներկայացվի աշխատակիցների կազմի փոփոխության վերաբերյալ հիմնավորված միջնորդություն: Փաստաթուղթը պետք է նաև ներառնի Տեխնիկական առաջադրանքում սահմանված պահանջներին՝ նոր աշխատակիցների որակավորման համապատասխանության ապահովման պայմանները,
- Որակյալ ծառայությունների ձեռքբերման նպատակով Ծառայությունների Կատարողին ներկայացվում են հետևյալ պահանջները: Կատարողը պետք է ունենա բարձր որակավորում, համապատասխան նյութատեխնիկական և կադրային ռեսուրսներ և, մասնավորապես.

№	Պահանջներ	Հաստատող փաստաթղթեր
1.	Վերջին 3 (երեք) տարվա ընթացքում առնվազն 5 ընկերություններում ակտիվների շուկայական/արդար և վերականգնման արժեքի	Հնարավոր մատակարարը պետք է ներկայացնի առնվազն 2 (երկու) քաղվածք Ակտիվների արդար արժեքի գնահատման ծառայությունների մատուցման պայմանագրերից

	գնահատման կատարման փորձ	(բացառությամբ առևտրային տեղեկատվության)
2.	Վերջին 3 (երեք) տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում և տարածաշրջանում էներգիայի (հզորության) արտադրությանը առնչվող նախագծերում աշխատանքային փորձ	Հնարավոր մատակարարը պետք է ներկայացնի առնվազն 1 (մեկ) քաղվածք էներգետիկայի բնագավառում խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրից (բացառությամբ առևտրային տեղեկատվության)

- Հնարավոր կատարողը պետք է ունենա իր հաստիքում և/կամ ծառայությունների մատուցմանը ներգրավել հետևյալ մասնագիտական գիտելիքներ և փորձ ունեցող մասնագետների.

№	Պահանջներ	Հաստատող փաստաթղթեր
1.	Ակտիվների գնահատման ծառայությունների մատուցման ոլորտում փորձ ունեցող առնվազն 2 (երկու) մասնագետ	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքային փորձի գրավոր հաստատում (Կատարողի կողմից վավերացված ռեզյումե) • Կատարողի փորձը հաստատող փաստաթղթերի պատճեններ (ակտեր և/կամ քաղվածքներ պայմանագրերից և/կամ հանձնարարական նամակներ և/կամ ակտիվների գնահատման ծառայությունների մատուցման ոլորտում փորձը հաստատող Կատարողի կողմից վավերացված տեղեկանքներ)
2.	Ակտիվների արդար արժեքի գնահատման անցկացման փորձ ունեցող առնվազն 1 (մեկ) մասնագետ	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքային փորձի գրավոր հաստատում (Կատարողի կողմից վավերացված ռեզյումե) • Կատարողի փորձը հաստատող փաստաթղթերի պատճեններ (ակտեր և/կամ հանձնարարական նամակներ և/կամ քաղվածքներ գնահատման ծառայությունների մատուցման պայմանագրերից

Օտար լեզուներով հաստատող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց հայերեն թարգմանությունը

ներք

- Կատարողը պարտավոր է սկսել գնահատման կատարումը գնահատման աշխատանքների կատարման պայմանագիրը (այսուհետ՝ *Պայմանագիր*)՝ մրցութային ընթացակարգերի արդյունքների հիման վրա կնքելուց հետո և Գնահատման օբյեկտների ցուցակները, ինչպես նաև Գնահատման օբյեկտների տեղադրության, տեխնիկական բնութագրերի մասին և դրանց վերաբերող այլ տեղեկությունները ստանալուց հետո,
- Գնահատումը պետք է կատարվի գնահատման գործունեության բնագավառում ՀՀ օրենսդրության և ՀՀ օրենսդրությանը չհակասող մասով ԳՄՍ –ի պահանջների համապատասխան,
- Գնահատման օբյեկտների շուկայական/արդար և վերականգնման արժեքը (գինը) որոշելիս պարտադիր կերպով պետք է կիրառվեն բոլոր մոտեցումները (եկամտային, շուկայական (համեմատական) և ծախսային): Մոտեցումներից որևէ մեկի կիրառումը, ինչպես նաև կիրառումից հրաժարվելը պետք է հստակ հիմնավորվի Կատարողի կողմից և համաձայնեցվի Պատվիրատուի հետ,
- Ծառայության մատուցման նպատակով Կատարողը որոշում և ձևավորում է մասնագետների խումբ, որը բաղկացած է գնահատման բնագավառի առնվազն 3 (երեք) մասնագետներից: Մասնագետներից մեկին կվերապահվեն խմբի ղեկավարի լիազորություններ, և նա պատասխանատվություն կկրի ամբողջ խմբի գործունեության համակարգման համար, ինչպես նաև Պատվիրատուի և Աուդիտորի հետ՝ խմբի անդամների փոխներգործության համար,
- Խմբի անդամների թիվը և կազմը կարող են փոփոխվել Ծառայության Կատարողի կողմից ըստ անհրաժեշտության: Կատարողը իրավունք ունի փոխելու խմբի անդամների թիվը և կազմը դրա կազմի մեջ այլ մասնագետների ներգրավման միջոցով, որոնց որակավորումը և մասնագիտական մակարդակը համապատասխանում են Տեխնիկական առաջադրանքի պահանջներին:

13. Սպասվող արդյունքներ

Կատարողը պետք է իրականացնի Օբյեկտի շուկայական/արդար և վերականգնման արժեքի (գնի) գնահատումը ՀՀ-ի և ԳՄՍ-ի կիրառելի օրենսդրության համապատասխան: Կատարողը կիրականացնի՝

1. դիտարկվող ակտիվների կազմի և վիճակի և Գնահատման օբյեկտների սահմանափակումների մասին անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն,

2. հիմնական միջոցների արդար արժեքի սահմանում, այդ թվում նաև կայցելի Գնահատման օբյեկտ և կգննի հիմնական ակտիվները,
3. ամորտիզացվող գույքի օգտակար կիրառման ժամկետների սահմանում (առկա է ոչ ավելի, քան 5 (հինգ) խումբ և որպես այդպիսին է ճանաչվում ՖՀՄՄ-ի և հարկային հաշվառման համապատասխան),
4. ձեռքբերման ծախսերի բաժանումը նույնականացված ակտիվների և պարտավորությունների՝ էլնելով դրանց արդար արժեքից,
5. էլեկտրոնային ձևաչափով (MS Excel) գնահատման օբյեկտների հիմնական միջոցների ցուցակների պատրաստումը,
6. Պատվիրատուի Գնահատման օբյեկտի արժեքի (գնի) գնահատման մասին հաշվետվության պատրաստումը:

14. Գնահատման կատարման հաշվետվություն

Կատարողը պետք է ներկայացնի հաշվետվություն ակտիվի արժեքի (գնի) գնահատման ընթացակարգերի արդյունքների մասին, որը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1. Պետք է նշվի Գնահատման օբյեկտը, Գնահատման յուրաքանչյուր օբյեկտի նկարագրությունը (խումբը), Հաշվետվությունից տվյալների ենթադրյալ օգտագործումը և համապատասխան ամսաթվերը. ակտիվների գնահատման ամսաթիվը և Հաշվետվության կազմման ամսաթիվը,
2. Գնահատման օբյեկտի պատմական ֆինանսական և գործառնական ցուցանիշների նկարագրությունն ու վերլուծությունը (անհրաժեշտության դեպքում),
3. Ճյուղի վերլուծությունը (ներառյալ Գնահատման օբյեկտների տեղադրման շրջանում արդյունաբերության վերլուծությունը),
4. Ընկերության նկարագրությունը (պատմություն, անձնակազմ, արտադրություն, տեխնիկական բնութագրեր, ֆինանսական հաշվետվության վերլուծություն և այլն),
5. Հիմնական միջոցների յուրաքանչյուր խմբի համար գնահատման կիրառվող մոտեցումներն ու մեթոդները՝

- ✓ վերլուծության հիմնական նախադրյալներ և հաշվարկներ, որոնք պետք է ներառեն վերլուծվող տեղեկատվության նկարագրությունը, ակտիվների արժեքի (գնի) գնահատման նկատմամբ կիրառվող մոտեցումների նկարագրությունը, ինչպես նաև Հաշվետվությունում տեղ գտած վերլուծությունը, կարծիքները և եզրակացությունները հիմնավորող դատողությունները),

- ✓ արժեքի հիմնական գործոնների և, անհրաժեշտության դեպքում, ներդրումային չափանիշների նկատմամբ զգայունության վերլուծություն,
- ✓ շարժական և անշարժ ակտիվների գնահատում,
- ✓ գնահատման մեջ ընդունված սահմանափակումներ և ենթադրություններ,
- ✓ արժեզրկման թեստ (IAS36 կիրառում),
- ✓ արդար արժեքի չափում (IFRS13 կիրառում),
- ✓ փոխհատուցվող արժեք (իրացման գուտ արժեքի որոշում),
- ✓ դրամական հոսքերի դիսկոնտավորում (շահույթների և վնասների մասին շտկված հաշվետվության վերլուծություն, սեփական կապիտալի շահութաբերության դրույքի հաշվարկ, հաշվարկ առանց ռիսկային դրույքի՝ սղաճերի տարբերությունների մեթոդի հիման վրա, սեփական կապիտալի արժեքի հաշվարկ, կապիտալի միջին կշռված արժեքի հաշվարկ և այլն),
- ✓ եզրակացություն,
- ✓ անուն, մասնագիտական որակավորում (ներառյալ լիցենզիայի և քաղաքացիաիրավական պատասխանատվության ապահովագրության պայմանագրի առկայություն), ինչպես նաև Կատարողի լիազորված անձի ստորագրություն:

Ակտիվների արժեքի գնահատման մասին հաշվետվությունը պետք է կազմվի հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Հաշվետվությունը պետք է ներկայացվի Պատվիրատուի գտնվելու վայր թղթային տարբերակով և Պատվիրատուի լիազորված անձանց էլեկտրոնային հասցեներին՝ էլեկտրոնային տարբերակով: Հաշվետվությունը պետք է ներառնի Կատարողի համապատասխանության մասին դիմումը, որը պետք է հաստատի, որ ակտիվների արժեքի (գնի) գնահատումը իրականացվել է ՖՀՄՄ-ի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ նորմատիվ իրավական ակտերի պահանջների և մրցութային ընթացակարգերի իրականացման արդյունքների հիման վրա կնքված Գնահատման աշխատանքների կատարման պայմանագրի պայմանների համապատասխան):

Ծառայության մատուցման արդյունքները պետք է.

-համաձայնեցվեն Պատվիրատուի Աուդիտորի հետ,

-հաշվարկային և եզրափակիչ ֆայլերը պետք է ներկայացվեն Excel ձևաչափով,

-պետք է ներկայացվեն Հաշվետվության տեսքով և ունենան համապատասխան եզրակացություններ: Հաշվետվության թղթային պատճենները ներկայացվում են 2 (երկու) օրինակով՝ յուրաքանչյուր լեզվով, ինչպես նաև էլեկտրոնային ձևաչափով:

15. Լրացուցիչ պահանջներ

- Հաշվետվությունը պետք է պարունակի ստուգվող տվյալներ, որոնք ներկայացվել են Տեխնիկական առաջադրանքի համապատասխան բաժիններում,
- Հաշվարկներ կատարելիս՝ պետք է ներկայացվեն բոլոր այն բանաձևերը, որոնց հիման վրա կատարվել են հաշվարկները՝ ընդունված նշանների և կրճատումների վերծանմամբ: Հաշվարկային և եզրափակիչ ֆայլերը պարտադիր կերպով ներկայացվում են Excel ձևաչափով (ընդ որում՝ բոլոր ներքին հղումները և բանաձևերը պետք է արտացոլվեն հաշվարկային բջիջներում),
- Կիրառվող ցուցանիշները պետք է պարտադիր կերպով նշվեն ՀՀ դրամով առանց ԱԱՀ-ի,
- Պետք է իրականացվի կշռային գործակիցների հստակ հիմնավորում (արդյունքների ընդունելի համընկնելիության դեպքում) կամ շուկայական/արդար արժեքի որոշման շրջանակներում արդյունքների անհամապատասխանության պատճառների վերլուծություն, որոնք ստացվել են տարբեր մոտեցումների կիրառմամբ (դրանց էական անհամապատասխանության դեպքում), և գերակա արդյունքի հիմնավորում:

16. Ծառայությունների մատուցման ժամկետները

Գնահատման ծառայությունների կատարման պայմանագիրը կնքելուց հետո Կատարողը պարտավոր է.

- 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ստուգել Տեխնիկական առաջադրանքում նշված Գնահատման օբյեկտի վերաբերյալ շահերի բախման առկայությունը,
- 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում ուղարկել Պատվիրատուի հասցեով տեղեկատվության ստացման հարցում, որը անհրաժեշտ է Առաջադրանքի համապատասխան գնահատում կատարելու համար,
- 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ուղարկել Պատվիրատուին տեղեկատվական նամակ՝ Կատարողի կողմից գնահատման Առաջադրանքին առնչվող ծառայությունների մատուցումը սկսելու մասին: Տեղեկատվական նամակին հարկավոր է կցել ծառայությունների մատուցման օրացուցային պլան և գնահատմանը ներգրավված գնահատողների մասին տեղեկություններ,
- Հարկավոր է տեղեկացնել Պատվիրատուին Օբյեկտների գնման կազմակերպման պլանների մասին (նմուշի ընտրությունը հարկավոր է նախապես համաձայնեցնել

Պատվիրատուի հետ) գնումից առնվազն 24 ժամ առաջ: Մուտքը դեպի Գնահատման օբյեկտներ ապահովում է Պատվիրատուն,

- Ներկայացնել Հաշվետվություն Գնահատման օբյեկտների արժեքի մասին (բաժանելով դրանք ըստ Գնահատման օբյեկտների ցանկի մեջ ներառված հիմնական միջոցների)՝ ծառայությունների մատուցման Պայմանագրի պայմանների համաձայն:

17. Վարձատրություն

Վարձատրությունը փոխանցվում է Կատարողի հաշվարկային հաշվին հետևյալ պարբերականությամբ՝

- Պայմանագրի գնի 20 %՝ Պայմանագիրը կնքելու պահից 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում,
- Պայմանագրի գնի 50%՝ Տեխնիկական առաջադրանքի 14-րդ կետում նշված՝ գնահատման մասին նախնական Հաշվետվության ներկայացման պահից 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում,
- Պայմանագրի գնի 20%՝ Կատարողի կողմից ծառայությունների մատուցման ավարտից հետո Կողմերի հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում,
- Պայմանագրի գնի 10 %՝ Պատվիրատուի Աուդիտորի կողմից՝ Տեխնիկական առաջադրանքի 14-րդ կետում նշված գնահատման մասին Հաշվետվությունը ընդունելուց հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում: Աուդիտորի կողմից Հաշվետվության արդյունքները չընդունելու դեպքում՝ Պատվիրատուն Աուդիտորի փաստարկներին համաձայն լինելու պարագայում իրավունք ունի չվճարելու վարձատրության տվյալ մասը:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N6

« _____ » փակ բաժնետիրական ընկերությունը, որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «*Պատվիրատու*», ի դեմս

_____ (պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)
որը գործում է [կանոնադրությամբ] [լիազորագրի] հիման վրա, մի կողմից,

և

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

(քաղաքացի, անձնագիր՝ _____, տրված __.__.__թ.՝ ____-ի կողմից, բնակության (հաշվառման) վայրի հասցեն՝ _____)

{ի դեմս _____
(ազգանունը, անունը, հայրանունը)

(քաղաքացի, անձնագիր՝ _____, տրված __.__.__թ.՝ ____-ի կողմից, բնակության (հաշվառման) վայրի հասցեն՝ _____)

որը գործում է լիազորագրի հիման վրա,}

որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «**Կատարող**», մյուս կողմից,]

[_____
(Ընկերության անվանումը, կազմակերպատիրական ձևը)

որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «**Կատարող**», ի դեմս

որը գործում է [կանոնադրության] [լիազորագրի] հիման վրա, մյուս կողմից,]

հետագա շարադրանքում միասին անվանվելով «**Կողմեր**», իսկ յուրաքանչյուրը առանձին՝ «**Կողմ**»,
{ամփոփ աղյուսակի 3 կետում նշված գնումային ընթացակարգի արդյունքներով,}

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել ծառայություններ (այսուհետ՝ «**Ծառայություններ**»), որոնց էությունը, բովանդակությունն ու ծավալը բերված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող դրա № 1 հավելվածի (այսուհետ՝ «**Հավելված**») Պայմանագրի էական պայմանների և վավերապայմանների ամփոփ աղյուսակի (այսուհետ՝ «**Ամփոփ աղյուսակ**») 2 կետում իսկ Պատվիրատուն պարտավորվում է Ծառայությունների համար Կատարողին վճարել Ամփոփ աղյուսակի 4 կետում նշված վարձատրությունը:

2. Ծառայությունների մատուցումը

- 2.1. Ծառայությունները Կատարողի կողմից մատուցվում են անձամբ: Կատարողը այլ անձանց սույն պայմանագրով իր պարտավորությունների կատարմանը մասնակից է դարձնում միայն Պատվիրատուի գրավոր համաձայնությամբ:
- 2.2. Կատարողը պարտավորվում է Ծառայություններ մատուցելիս հետևել Պատվիրատուի կամ նրա կողմից լիազորված այլ անձի ցուցումներին և պահանջներին:
- 2.3. Ծառայությունների մատուցման հետ կապված հարցերը Կատարողի կողմից կլուծվեն ինքնուրույն, սակայն սույն պայմանագրի 2.2 կետի հաշվառմամբ:
- 2.4. Ծառայությունները կատարվում են Ամփոփ աղյուսակի 2.5 կետում նշված Կողմի ուժերով, նյութերով և միջոցներով:
- 2.5. Կատարողը Ծառայությունները մատուցելիս պարտավոր է կատարել շրջակա միջավայրի պահպանության, անվտանգության տեխնիկայի պահանջների վերաբերյալ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջները:
- 2.6. Պատվիրատուն իրավունք ունի Ծառայությունների առանձին մասերի մատուցումը հանձնարարել այլ անձանց:

3. Ծառայությունների Որակը

- 3.1. Ծառայությունների որակը պետք է համապատասխանի Ամփոփ աղյուսակի 2.4 կետում նշված, ինչպես նաև տվյալ տեսակի ծառայություններին սովորաբար ներկայացվող պահանջներին:
- 3.2. Պատվիրատուն իրավունք ունի հսկողություն իրականացնել մատուցվող Ծառայությունների ընթացքի և որակի, դրանց կատարման ժամկետների (ժամանակացույցի) պահպանման՝ առանց միջամտելու Կատարողի օպերատիվ տնտեսական գործունեությանը:
- 3.3. Ծառայությունները սույն պայմանագրի խախտմամբ մատուցելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի, իր ընտրությամբ, Կատարողից պահանջել՝

- 3.3.1 ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու թերությունները.
- 3.3.2 համաչափորեն նվազեցնելու Վարձատրությունը.
- 3.3.3 հատուցելու թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը:

4. Երաշխիքներ

- 4.1. Կատարողը երաշխավորում է Ծառայությունների մատուցման գործունեության իրականացման համար իր պատշաճ մասնագիտական որակավորումը և քաղաքացիաիրավական իրավունակությունը:
- 4.2. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է առանց հակառակ Կողմի նախնական համաձայնության չփոխանցել (չզիջել) երրորդ անձանց սույն պայմանագրով նախատեսված կամ դրանից բխող որևէ իրավունք (պահանջ):
- 4.3. Ծառայությունների արդյունքի նկատմամբ Պատվիրատուի սեփականության իրավունքը ծագում է Կողմերի կողմից հանձնման-ընդունման համապատասխան ակտը վավերացնելու պահից:

5. Ռիսկերը

- 5.1. Կատարողը կրում է սույն պայմանագրի կատարման համար օգտագործվող գույքի պատահական կորստի կամ վնասվածքի համար բոլոր ռիսկերը:

6. Ժամկետները

- 6.1. Կատարողը Ծառայությունները մատուցում է Ամփոփ Աղյուսակի 2.6-2.8 կետերում նշված ժամկետներում:
- 6.2. Ծառայությունների մատուցման սկզբնական, միջանկյալ և (կամ) վերջնական ժամկետը կարող է փոփոխվել Պատվիրատուի գրավոր համաձայնությամբ կամ ցուցումով:

7. Հանձնում-ընդունումը

- 7.1. Ծառայությունների արդյունքը կամ դրանց փուլը հանձնելու համար պատրաստ լինելու մասին Կատարողից հաղորդում ստացած Պատվիրատուն սկսում է դրա ընդունումը:
- 7.2. Ծառայությունների հանձնում-ընդունումը համարվում է կատարված Պատվիրատուի Գլխավոր տնօրենի (կամ նրա լիազորած անձի) կողմից Կատարողից ստացած կատարողական ակտը վավերացնելու պահից:
- 7.3. Ծառայությունների բնույթից ելնելով՝ դրանց ընդունմանը պետք է նախորդի նախնական փորձարկումը: Այդ դեպքում ընդունումը կարող է իրականացվել միայն նախնական փորձարկման դրական արդյունքի հիման վրա:
- 7.4. Պատվիրատուն, որը Ծառայություններն ընդունելուց հետո դրանցում հայտնաբերել է սույն պայմանագրից ցանկացած շեղում կամ այլ թերություններ, պարտավոր է դրանք հայտնաբերելուց հետո՝ ողջամիտ ժամկետում այդ մասին հայտնել Կատարողին:
- 7.5. Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել Ծառայությունների արդյունքն ընդունելուց, եթե հայտնաբերվել են թերություններ, որոնք բացառում են դրա օգտագործումը սույն պայմանագրով նախատեսված նպատակով, և Կատարողը կամ Պատվիրատուն չեն կարող դրանք վերացնել:

8. Վարձատրությունը և Հաշվարկները

- 8.1. Պատվիրատուն պարտավոր է Ծառայությունների համար վճարել Ամփոփ աղյուսակի 4 կետում նշված վարձատրությունը (այսուհետ՝ «**Վարձատրություն**»):
- 8.2. Վարձատրությունը վճարվում է Ամփոփ աղյուսակի 4.5 կետում նշված պարբերականությամբ համապատասխան հաշիվը ստանալուց հետո երրորդ օրացուցային ամսվա 26-ից մինչև վերջին օրը:
- 8.3. Վարձատրությունը վճարվում է անկանխիկ հաշվարկով՝ Ամփոփ աղյուսակի 6.8 կետում նշված՝ Կատարողի բանկային հաշվին դրամական փոխանցում կատարելու միջոցով:
- 8.4. Սույն պայմանագրի 8.1 կետում նշված գումարն իր մեջ է ներառում այդ կապակցությամբ վճարման ենթակա բոլոր հարկերի և պարտադիր այլ վճարների գումարները, և համապատասխան հարկային ու այլ պարտավորությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն:
- 8.5. Կատարողի կողմից Ծառայությունները մատուցելիս օգտագործվող արտասահմանյան սարքավորում և/կամ նյութ գնելու դեպքում Պատվիրատուն Կատարողին չի փոխհատուցում այն ծախսերը, որոնք կապված են հայկական դրամի՝ արտարժույթի նկատմամբ փոփոխվելու հետ:

9. Կատարողի պարտավորությունների ապահովումը

9.1. Սույն պայմանագրով Կատարողի պարտավորությունների պատշաճ կատարումը կարող է ապահովվել տուժանքով [նշվում է ապահովման գումարը (Պայմանագրի ենթադրվող արժեքի 3% ոչ ավել) դրամի չափով:

10. Ծանուցումներ

10.1. Սույն պայմանագրին համապատասխան ուղղվող ցանկացած ծանուցում պետք է կազմված լինի գրավոր ձևով և ստորագրված՝ ուղղող Կողմի անունից գործելու համար լիազորված անձի կողմից: Այդպիսի ծանուցումը կարող է հանձնարարվել անձամբ, ուղարկվել փոստով՝ պատվիրված ժամանակով կամ փոխանցվել ֆակսիմալային կամ էլեկտրոնային կապով՝ սույն պայմանագրի ստորագրության տողից առաջ նշված հասցեներով կամ համարներով:

10.2. Ծանուցումը կհամարվի ստացված՝

10.2.1 Անձամբ հանձնվելու կամ պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ փաստացի հանձնման ամսաթվին և ժամանակին,

10.2.2 Ֆաքսիմալային կապով կամ էլեկտրոնային փոստով փոխանցման դեպքում՝ ուղարկողի ֆակսիմալային (էլեկտրոնային) ապարատով տպված փոխանցման արձանագրությամբ հաստատված ուղարկման ամսաթվին և ժամանակին, պայմանով, որ եթե ֆակսիմալային կապով կամ էլեկտրոնային փոստով փոխանցումն իրականացվում է սովորական աշխատանքային ժամերից դուրս, ծանուցումը կհամարվի ստացված հաջորդ աշխատանքային օրվա 10:00-ին:

11. Գաղտնիությունը

11.1. Կողմերը ստանձնում են պայմանագրի հետ կապված մի Կողմից մյուս Կողմին ուղղակի կամ միջնորդավորված կերպով տրամադրված ցանկացած տեղեկատվության և փաստաթղթերի չիրապարակման պարտավորություններ՝ անկախ նրանից, թե երբ է այդպիսի տեղեկատվությունը տրամադրվել՝ մինչև պայմանագրի գործողության ժամկետի լրանալը, դրա ընթացքում, թե՛ ավարտին:

11.2. Տեղեկատվության չիրապարակման պարտավորությունը չի տարածվում հանրամատչելի տեղեկատվության, ինչպես նաև այն տեղեկատվության վրա, որը հայտնի կդառնա ոչ պայմանագրի Կողմի մեղքով:

12. Գործողությունը

12.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և դրա պայմանները Կողմերի համար պարտադիր են դառնում Ամփոփ աղյուսակի 1.1 կետում նշված սույն պայմանագրի կնքման (Կողմերի ստորագրման) պահից և կիրառվում են Ամփոփ աղյուսակի 1.3 կետում նշված ամսաթվից Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

12.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են համարվում դրա առարկայի վերաբերյալ Կողմերի միջև նախկինում եղած բանավոր կամ գրավոր համաձայնություններն ու պայմանավորվածությունները:

12.3. Սույն պայմանագրի առանձին դրույթի կամ մասի անվավերությունը չի հանգեցնում դրա մյուս դրույթների կամ մասերի անվավերությանը:

12.4. Սույն պայմանագիրը գործում է մինչև Կողմերի կողմից սույն պայմանագրով որոշված պարտականությունների լրիվ կատարումը:

13. Փոփոխություններ

13.1. Սույն պայմանագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում վավերական է, եթե կնքված է գրավոր ձևով:

13.2. Կատարողի վավերապայմանների յուրաքնչյուր և ցանկացած փոփոխության դեպքում՝ Կատարողը ծանուցում է դրա մասին Պատվիրատուին այդպիսի փոփոխության պահից 7 օրվա ընթացքում:

14. Դադարեցում

14.1. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի գրավոր համաձայնությամբ:

14.2. Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝

14.2.1 և պահանջել հատուցելու վնասները, եթե Կատարողը ժամանակին չի սկսում սույն պայմանագրի կատարումը կամ Աշխատանքները կատարում է այնքան դանդաղ, որ դրանց ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, սույն Պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում:

14.2.2 կամ Կատարողի հաշվին Ծառայությունների թերությունների վերացնելը հանձնարարել այլ անձանց և պահանջել հատուցելու վնասները, եթե Կատարողի կողմից Պատվիրատուի հայտնաբերված թերությունները չեն վերացվել Պատվիրատուի նշանակած ողջամիտ ժամկետում:

14.2.3 մինչև Ծառայությունները իրեն հանձնելը ցանկացած ժամանակ՝ Կատարողին վճարելով մինչև սույն պայմանագիրը կատարելուց իր հրաժարվելու վերաբերյալ ծանուցում ստանալու պահը մատուցված Ծառայություններին համարժեք Վարձատրությունը:

14.3. Կատարողը իրավունք ունի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝ Պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով:

15. Կողմերի պատասխանատվությունը

15.1. Կողմերը կրում են գույքային և այլ պատասխանատվություն սույն պայմանագրից բխող իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և այլ նորմատիվ ակտերին համապատասխան:

15.2. Սույն պայմանագրի կատարման նպատակով Պատվիրատուի տրված գույքի պահպանման համար պատասխանատվություն է կրում Կատարողը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան:

15.3. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների մատուցման ինչպես սկզբնական և վերջնական, այնպես էլ միջանկյալ ժամկետները խախտելու համար:

15.4. Ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու դեպքում՝ ուշացված յուրաքանչյուր օրվա համար Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ Վարձատրության՝ Ամփոփ աղյուսակի 2.10 կետում նախատեսված չափով, բայց ոչ ավելի քան սույն Պայմանագրի արժեքի 10%:

15.5. Վճարումների ժամկետները խախտելու դեպքում՝ ուշացված յուրաքանչյուր օրվա համար Պատվիրատուն Կատարողին վճարում է տուգանք՝ Վարձատրության՝ Ամփոփ աղյուսակի 2.10 կետում նախատեսված չափով, բայց ոչ ավելի քան սույն Պայմանագրի արժեքի 10%:

15.6. Սույն պայմանագրի կատարման անհնարինության դեպքում, որը ծագել է Պատվիրատուի մեղքով կամ այնպիսի հանգամանքներից, որոնց համար Կողմերից որևէ մեկը պատասխանատվություն չի կրում, Պատվիրատուն Կատարողին հատուցում է նրա կատարած փաստացի ծախսերը:

15.7. Կողմերը ազատվում են պատասխանատվությունից սույն պայմանագրով իրենց պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակի չկատարելու համար, եթե դրանց չկատարումը հանդիսանում է անհաղթահարելի ուժի հանգամանքների հետևանք:

16. Կիրառելի իրավունք

16.1. Սույն պայմանագրի նկատմամբ, ներառյալ՝ Կողմերի իրավունքների և պարտականությունների բովանդակության, մեկնաբանման, կատարման, չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքների, դադարման, առջին չլինելու և դրա հետևանքների, պայմանագրից ծագող պահանջի զիջման և պարտքի փոխանցման առնչությամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենքները և այլ իրավական ակտերը:

17. Վեճերի լուծում

17.1. Սույն պայմանագրից կամ դրա կապակցությամբ ծագող բոլոր վեճերը, տարաձայնությունները և պահանջները, ներառյալ՝ դրա կատարմանը, խախտմանը, դադարեցմանը կամ անվավերությանը վերաբերող, ենթակա են կարգավորման՝ Կողմերի միջև բանակցությունների և խորհրդակցությունների ճանապարհով, իսկ, համաձայնության չհասնելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության իրավասու դատական ատյաններում:

18. Մեկնաբանությունը

18.1. Սույն պայմանագրի դրույթները մեկնաբանելիս՝ Կողմերը, ինչպես նաև դատարանը, պետք է ելնեն դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Այդպիսիք պարզ չլինելու դեպքում պայմանագրի որոշակի դրույթի մեկնաբանությունը որոշվում է՝ այն սույն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

18.2. Սույն պայմանագրի հոդվածների և հավելվածների վերնագրերը կրում են օժանդակող բնույթ և չեն կարող օգտագործվել պայմանագրի պայմանները մեկնաբանելու համար:

19. Պայմանագրի կառուցվածքը

19.1. Սույն պայմանագիրը բաղկացած է հիմնական մասից, որի տեքստը բաժանված է համարակալված հոդվածների ու կետերի և հավելվածներից: Սույն պայմանագրի նշված բոլոր կառուցվածքային տարրերը միասին կազմում են մեկ ամբողջություն՝ սույն պայմանագրի մեկնաբանման և կատարման բոլոր նպատակների համար:

Սույն պայմանագրի հավելվածներ են համարվում այն բոլոր փաստաթղթերը, ինչ ձևով էլ դրանք կազմված լինեն, որոնց վրա, որպես հավելվածի, ուղղակի հղում է պարունակվում սույն պայմանագրի տեքստում և (կամ) որոնց տեքստում ուղղակի նշում է պարունակվում այն մասին, որ դրանք սույն պայմանագրի հավելվածն են և որոնք ստորագրված են Կողմերի կողմից:

19.2. Սույն պայմանագրի բոլոր պայմաններին Կողմերի համաձայնությունը հավաստվում է նրանց կողմից սույն պայմանագրի № 1 հավելվածը ստորագրելով:

20. Լեզուներ

20.1. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն և ռուսերեն լեզուներով, որոնց միջև որևէ անհամապատասխանության կամ հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն կնքվածին:

21. Եզրափակիչ դրույթներ

21.1. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:

[ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՀԵՏԵՎՈՒՄԷ]

Հավելված № 1

Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի

ԱՄՓՈՓ ԱՂՅՈՒՄԱԿ

Պայմանագրի էական պայմանների և վավերապայմանների

1.	Պայմանագիրը <i>Договор</i>	1.1	կնքման ամսաթիվը <i>дата заключения</i>	«__» _____ 20__ թ.
		1.2	կնքման վայրը <i>место заключения</i>	
		1.3	կիրառման ամսաթիվը <i>дата применения</i>	«__» _____ 20__ թ.
2.	Ծառայությունները <i>Услуги</i>	2.1	էությունը <i>существо</i>	
		2.2	բովանդակությունը <i>содержание</i>	
		2.3	ծավալը <i>объем</i>	
		2.4	որակը <i>качество</i>	
		2.5	ուժեր, նյութեր և միջոցներ տրամադրող Կողմը <i>Сторона, предоставляющая материалы, силы и средства</i>	
		2.6	կատարելու սկզբնական ժամկետը <i>начальный срок выполнения</i>	«__» _____ 20__ թ.
		2.7	կատարելու միջանկյալ ժամկետը <i>промежуточный срок выполнения</i>	«__» _____ 20__ թ.
				«__» _____ 20__ թ.
				«__» _____ 20__ թ.
		2.8	կատարելու վերջնական ժամկետը <i>конечный срок выполнения</i>	«__» _____ 20__ թ.
2.9	երաշխիքային ժամկետ <i>гарантийный срок</i>			
2.10	Կատարող <i>Исполнитель</i>			

		<i>Պատվիրատու Заказчик</i>		
3.	<i>Գնմանային ընթացակա րգ Закупочная процедура</i>	3.1 <i>տեսակը вид</i>		
		3.2 <i>արձանագրության համարը номер протокола</i>	«__» _____ 20__թ.	
		3.3 <i>արձանագրության ամսաթիվը дата протокола</i>	«__» _____ 20__թ.	
4.	<i>Վարձատրությունը Вознаграждение</i>	4.1 <i>չափը (ՀՀ դրամ), ստանց ԱԱՀ размер (драм РА), без НДС</i>		
		4.2 <i>ԱԱՀ НДС</i>		
		4.3 <i>ընթացքը итого</i>		
		4.4 <i>հաշվարկային ժամանակահատված расчетный период</i>		
		4.5 <i>պարբերականությունը периодичность</i>		
5.	<i>Պատվիրատու Заказчик</i>	5.1 <i>լրիվ ֆիրմային անվանումը полное фирменное наименовани е</i>		
		5.2 <i>գտնվելու վայրի հասցեն адрес места нахождения</i>		
		5.3	<i>անվանումը наименование</i>	
			<i>հասցեն адрес</i>	
			<i>հ/հ համարը номер р/с</i>	
		5.4	<i>պաշտոնը должность</i>	
			<i>Ա.Ա.Հ. Ф.И.О.</i>	
<i>հիմքը основание</i>				

		<p>ստորագրություն նր подпись</p>	
	5.5	<p>կնիքի որոշմվածքը оттиск печати</p>	
<p>6. Կատարող Исполнитель</p>	6.1	<p>անունը, ազգանունը/ը րիվ ֆիրմային անվանումը имя, фамилия/полное фирменное наименовани е</p>	
	6.2	<p>կազմակերպական- իրավական ձևը организационно- правовая форма</p>	
	6.3	<p>բնակության/գտնվելը ի վայրի հասցեն адрес местажител ьства/ нахождения</p>	
	6.4	<p>ՀՎՀՀ ИННП</p>	
	6.5	<p>րեզիդենտությունը резидентство</p>	
	6.6	<p>ԱԱՀ վճարող սկիսծ плательщик НДС с</p>	
	6.7	<p>e-mail</p>	
	6.8	<p>անվանումը наименование</p>	
		<p>հասցեն адрес</p>	

		<i>հ/հ համարը номер р/с</i>	
	6.9	<i>պաշտոնը должность</i>	
		<i>Ա.Ա.Հ. Ф.И.О.</i>	
		<i>հիմքը основание</i>	
		<i>ստորագրությունը подпись</i>	
6.10	<i>կնիքի դրոշմվածքը оттиск печати</i>		